



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ 08(399) «26» մարտի 2020թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ | | |
|--|---|----|
| ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ | | |
| 195 | «Արցախի Հանրապետությունում քննչական կոմիտեի ծառայողի օրը նշելու մասին» ԱՀ կառավարության N 152-Ն որոշումը | 3 |
| 196 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 3-ի N 207 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 176-Ն որոշումը..... | 4 |
| 197 | «Արցախի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողի և Արցախի Հանրապետության քննչական կոմիտեի աշխատակազմում պետական ծառայողի կենսաթոշակը նշանակելու կարգը սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 181-Ն որոշումը..... | 5 |
| 198 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի N 9-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 182-Ն որոշումը..... | 8 |
| 199 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 902-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 183-Ն որոշումը..... | 9 |
| 200 | «Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 8-ի N 129-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 197-Ն որոշումը..... | 11 |
| ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ | | |
| ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ | | |
| 201 | «Բժշկական նպատակներով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործման կարգն ու պայմանները սահմանելու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 85-Ն հրամանը | 12 |
| 202 | «Բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի լիցենզիա տրամադրելու մասին» ԱՀ գյուղատնտեսության նախարարի N 45 հրամանը..... | 26 |
| 203 | «Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիրներ տրամադրելու, լիցենզիայի և լիցենզիայի ներդիրների գործողությունները դադարեցնելու մասին» ԱՀ | |

| | | |
|-----|--|----|
| | Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 55 հրամանը..... | 27 |
| | ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ | |
| 204 | ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ /1603/02/18 որոշումը..... | 28 |
| 205 | ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ /2515/02/19 որոշումը..... | 39 |
| | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ | |
| 206 | «Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքի 32-րդ հոդվածի և Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 16.01.2020 թվականի N 27-Ն որոշման դրույթների կիրառման վերաբերյալ» ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի N 1 պաշտոնական պարզաբանումը | 48 |

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

12 մարտի 2020թ.

N 152-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԾԱՌԱՅՈՂԻ ՕՐԸ ՆՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Արցախի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքի 24-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Արցախի Հանրապետությունում հուլիսի 1-ը նշել որպես քննչական կոմիտեի ծառայողի օր:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

19 մարտի 2020թ.

N 176-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2000 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 207 ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 3-ի «Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» N 207 որոշմամբ հաստատված ցանկը 32-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 33-րդ և 34-րդ կետերով՝

«33. Նոր կորոնավիրուսային վարակ (2019n-CoV)

34. Համաճարակաբանական ներուժ ունեցող նոր առաջ եկող կամ վերադարձող այլ ախտածիններով պայմանավորված վարակներ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

19 մարտի 2020թ.

N 181-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂԻ
ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ
ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Արցախի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել Արցախի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողի և Արցախի Հանրապետության քննչական կոմիտեի աշխատակազմում պետական ծառայողի կենսաթոշակը նշանակելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Արցախի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողի և Արցախի Հանրապետության քննչական կոմիտեի աշխատակազմի պետական ծառայողի պաշտոն զբաղեցրած անձին կենսաթոշակ նշանակում և վճարում է Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմի սոցիալական ապահովության պետական գործակալությունը՝ իր տարածքային ստորաբաժանումների միջոցով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Կ Ա Ր Գ
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԵՎ
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ

1. Սույն կարգը կարգավորում է «Արցախի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 61-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կենսաթոշակը (այսուհետ՝ կենսաթոշակ) նշանակելուն առնչվող հարաբերությունները:

2. Կենսաթոշակը նշանակվում է օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերով սահմանված հիմքերով կամ Աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Դատական ծառայության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով Արցախի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ քննչական կոմիտե) ծառայողի կամ քննչական կոմիտեի աշխատակազմում պետական ծառայողի (այսուհետ՝ ծառայող) պաշտոնից ազատված ծառայողին, եթե օրենքի 56-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը քննչական կոմիտեի աշխատակազմում պետական ծառայողի պաշտոնում նշանակվելու օրվա դրությամբ ունեցել է Արցախի Հանրապետության ոստիկանության կամ ազգային անվտանգության բնագավառի պետական լիազոր մարմիններում զինվորական ծառայության առնվազն 10 տարվա ստաժ և պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ ձեռք է բերել առնվազն 20 օրացուցային տարվա ծառայության ստաժ:

Սույն կետով սահմանված ծառայության ստաժում օրացուցային հաշվարկով հաշվառվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի N 9-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 2-րդ կետում նշված ժամանակահատվածները և ծառայողի պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը:

3. Սույն կարգի 2-րդ կետում նշված ծառայողին կենսաթոշակ նշանակվում, վճարվում (այդ թվում՝ չվճարված կենսաթոշակի գումարը), նրա կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում և վերականգնվում, կենսաթոշակից պահումներ կատարվում, ավելի վճարված կենսաթոշակի գումարները բռնագանձվում, հետ գանձվում և Արցախի Հանրապետության պետական բյուջե են վերականգնվում, ինչպես նաև կենսաթոշակատուի մահվան դեպքում թաղման նպաստը նշանակվում և վճարվում է «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով զինծառայողների համար սահմանված կարգով և ժամկետում:

4. Սույն կարգով սահմանված՝ կենսաթոշակ նշանակելուն առնչվող տվյալները ներառվում են պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան:

5. Ծառայողի կենսաթոշակի չափը հաշվարկելիս հիմք է ընդունվում Արցախի Հանրապետության ոստիկանության կամ ազգային անվտանգության բնագավառի պետական լիազոր մարմիններից ազատվելու օրվա դրությամբ զբաղեցրած վերջին պաշտոնի խմբի ստաժին համապատասխանող գործակիցը:

6. Ծառայողի կենսաթոշակը վճարվում է անկանխիկ կամ կանխիկ եղանակով՝ կենսաթոշակատուի դիմումի հիման վրա, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 906-Ն որոշմամբ հաստատված կարգով:

7. Ծառայողին կենսաթոշակ նշանակվում, վճարումն ապահովվում, կենսաթոշակ նշանակելու և կենսաթոշակի չափը հաշվարկելու համար նրա ստաժը հաշվարկվում, ինչպես նաև կենսաթոշակի գործը (փաստաթղթերը) վարվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի N 9-Ն որոշմամբ հաստատված NN 1, 2, 8, 9, 13 և 14 հավելվածների, ինչպես նաև սույն կարգի համաձայն:

8. Կենսաթոշակ նշանակելու համար դիմումին կից ներկայացվում են՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի N 9-Ն որոշմամբ հաստատված N 10 հավելվածի 3-րդ կետում նշված՝ անձը հաստատող փաստաթուղթը.

2) հանրային ծառայության համարանիշը կամ հանրային ծառայության համարանիշ չստանալու մասին տեղեկանքը.

3) ստածը հաստատող փաստաթղթեր (աշխատանքային գրքույկը, անհրաժեշտության դեպքում՝ ստածը հաստատող այլ փաստաթղթեր կամ արխիվային տեղեկանքներ).

4) քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնում օրենքի 56-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն նշանակված լինելու մասին փաստաթուղթ.

5) ծառայողի պաշտոնից ազատվելու մասին հրամանի քաղվածքը.

6) Արցախի Հանրապետության ոստիկանության կամ ազգային անվտանգության բնագավառի պետական լիազոր մարմիններից ազատվելու օրվա դրությամբ զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված խմբի վերաբերյալ տեղեկանքը:

9. Կենսաթոշակ վճարելը վերսկսելու և չվճարված կենսաթոշակի գումարը վճարելու, ինչպես նաև կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստը վճարելու համար անձը ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի N 9-Ն որոշմամբ հաստատված N 10 հավելվածի 24-րդ, 24.1-ին, 25-րդ, 26-րդ և 27-րդ կետերում նշված փաստաթղթերը:

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

19 մարտի 2020թ.

N 182-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 9-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի «Պետական կենսաթոշակների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 9-Ն որոշման N 1 հավելվածի 46-րդ կետում «քննիչի» բառից հետո լրացնել «, քննչական կոմիտեի ծառայողի» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

19 մարտի 2020թ.

N 183-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 902-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի ««Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 902-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված N 2 հավելվածի՝

ա. 3-րդ կետի 8-րդ ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անշարժ գույքի պետական» բառերից առաջ լրացնել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչության պետի, վարչության պետի տեղակալի,» բառերը,

բ. 3-րդ կետի 10-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ ենթակետ.

«11) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արդյունաբերության մեջ աշխատանքների անվտանգ կատարման և լեռնային հսկողության տեսչության պետի պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը:»,

գ. 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 3.1-ին կետերում նշված՝ կենսաթոշակի իրավունք տվող ժամանակահատվածում հաշվառվում են դատախազի, դատախազության համակարգում քննիչի (ներառյալ՝ հատուկ քննչական բաժնի պետի, պետի տեղակալի), քննչական կոմիտեի ծառայողի պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածները, ինչպես նաև

1) մինչև 2009 թվականի հունվարի 1-ը դատախազի տեղակալի, դատախազի օգնականի, դատախազության քննչական բաժնի պետի, պետի տեղակալի պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը.

2) քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնում «Արցախի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքի 56-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով նշանակվելու դեպքում՝ մինչև այդ պաշտոնում նշանակվելն Արցախի Հանրապետության ոստիկանության, ազգային անվտանգության բնագավառի պետական լիազոր մարմնի և հարկային մարմնի քննչական մարմիններում պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը:»,

դ. 8-րդ կետում «քննիչին» և «քննիչի» բառերից հետո համապատասխանաբար լրացնել «, քննչական կոմիտեի ծառայողին» և «, քննչական կոմիտեի ծառայողի» բառերը.

2) որոշմամբ հաստատված N 3 հավելվածի՝

ա. 13-րդ կետի 13-րդ ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անշարժ գույքի պետական» բառերից առաջ լրացնել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչության պետի,» բառերը, իսկ «համար» բառից առաջ՝ «, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արդյունաբերության մեջ աշխատանքների անվտանգ կատարման և լեռնային հսկողության տեսչության պետի» բառերը,

բ. 13-րդ կետի 14-րդ ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անշարժ գույքի պետական» բառերից առաջ լրացնել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչության պետի տեղակալի» բառերը,

գ. 20-րդ կետում «քննիչի» բառից հետո լրացնել «, քննչական կոմիտեի ծառայողի» բառերը,

դ. 21-րդ կետում «քննիչի» բառից հետո լրացնել «, քննչական կոմիտեի ծառայողի» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

23 մարտի 2020թ.

N 197-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 8-Ի N 129-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ
ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 8-ի «Արցախի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված դրամական միջոցները հասարակական կազմակերպություններին որպես դրամաշնորհ հատկացնելու կարգը, հասարակական կազմակերպություններին դրամաշնորհ հատկացնելու հարցերով խորհրդատվական հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 584 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 129-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետում «2019» թվից հետո լրացնել «, 2020» թիվը, իսկ «թվականին» բառը փոխարինել «թվականներին» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի մարտի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

2020 թվականի մարտի 12-ի

**ԲԺՇԿԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ
(ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 85-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

Հիմք ընդունելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Սահմանել բժշկական նպատակներով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործման կարգն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն հրամանի հավելվածով հաստատված կարգի դրույթները տարածվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային առողջապահական համակարգի միջոցով օրենսդրությամբ սահմանված գործընթացի ժամանակ փաստաթղթաշրջանառությունն ապահովելու համար:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Ա. Խաչատուրյանին:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Ա. ԲԱՂՐՅԱՆ

2020 թվականի մարտի 12
ք. Ստեփանակերտ

**ԲԺՇԿԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ
(ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Արցախի Հանրապետության բժշկական հաստատություններում պացիենտներին բժշկական ցուցումներով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործման կարգի ու պայմանների (ստացման, հաշվառման, պահպանման, դուրս գրման, բացթողման, ոչնչացման) իրականացման հետ կապված հարաբերությունները:

**2. ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ)
ՆՅՈՒԹԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ**

2. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի նշանակման ցուցում է հանդիսանում այն ցավային համախտանիշը, երբ ցավի ուժգնությունն, ըստ Վիզուալ Անալոգային Սանդղակի և Առողջապահության համաշխարհային կազմակերպության եռաստիճան սանդղակի, գնահատվում է միջին և ուժեղ աստիճանի ու հնարավոր չէ մեղմել այլ բնույթի ցավազրկող դեղերով, ինչպես նաև որպես փոխարինող թերապիա թմրամիջոցներ օգտագործողներին: Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի նշանակումն իրականացվում է պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ցավային համախտանիշի կառավարման նպատակով, ինչպես նաև ծանր հևոցի դեպքում, թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի նշանակման կլինիկական ուղեցույցով:

3. Թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր կարող են նշանակվել նաև համապատասխան բժշկական ցուցումների առկայության դեպքում:

**3. ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ (ՍՏԱՑՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ,
ԴՈՒՐՄ ԳՐՄԱՆ, ԲԱՑԹՈՂՄԱՆ, ՈՉՆՉԱՑՄԱՆ) ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՑԻՆ ՁԵՎՈՎ
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ՇՏԱՊ ԵՎ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

4. Հիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների, շտապ և անհետաձգելի օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների տնօրենի հրամանով հաստատությունում նշանակվում է թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության (ստացման, հաշվառման, պահպանման, դուրս գրման, բացթողման, ոչնչացման) իրականացման համար պատասխանատու անձ:

5. Հիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների, շտապ և անհետաձգելի օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների դեղատանը թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պահպանման համար պետք է ունենան երկաթյա պահարան, որը տեղակայված է հատուկ դրա պահպանման համար նախատեսված վանդակաճաղերով պատուհաններով և երկաթյա դուռ ունեցող սենյակում, որն ապահովված է ձայնային ահագանգման համակարգով:

6. Աշխատանքային օրվա ավարտին մետաղյա պահարանները և սենյակը, որտեղ գտնվում են այդ պահարանները պետք է փակվեն և միացվեն ձայնային ահագանգման համակարգով: Բանալիները պահվում են պատասխանատու անձի մոտ:

7. Թմրամիջոցները և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը ենթակա են հաշվառման: Հաշվառումը վարվում է սրվակ, ամպուլ, դեղահատ, սպեղանի, գրամ, միլիգրամ, լիտր, միլիլիտր միավորներով:

8. Բժշկական հաստատությունների դեղատանը թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի հաշվառման համար պահվում է առանձին մատյան (Ձև 1): Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի յուրաքանչյուր դեղաձևի և

դեղաչափի համար գրքում հասկացվում է առանձին էջ: Մատյանի էջերը պետք է լինեն համարակալված, կարված և վավերացված բժշկական հաստատության տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությամբ ու կնիքով (առկայության դեպքում): Մեկ մատյանում թույլատրվում է լրացնել մի քանի դեղեր:

9. Յուրաքանչյուր ամսվա վերջին հիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների, շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների տնօրենի կամ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության իրականացման համար պատասխանատու անձի կողմից կատարվում է թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի հաշվառում ու կազմվում է հաշվետվություն:

10. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մնացորդը հիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում, շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների դեղատանը չպետք է գերազանցի հաստատության երկու ամսվա պահանջը բժշկական հաստատության բաժնում (բաժանմունքում, կաբինետում, կայանում) այդ բաժնի (բաժանմունքի, կաբինետի) յոթ օրվա պահանջը, իսկ շտապ բուժօգնության կայանների այդ օրվա պահանջը:

11. Թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի բաց թողումը բժշկական հաստատությունների դեղատնից կատարվում է պահանջագիր-ապրանքագրերի հիման վրա: Պահանջագիր-ապրանքագրի պահանջագիր մասը լրացվում է բժշկական հաստատությունում, ստորագրվում և կնքվում նրա տնօրենի կամ նրա տեղակալի կողմից, իսկ շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների՝ տնօրենի կամ նրա տեղակալի կողմից (Ձև 2), իսկ ապրանքագիր մասը լրացվում է դեղատանը և ստորագրվում դեղատան աշխատողի կողմից:

12. Թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի բաց թողման պահանջագիր-ապրանքագրերը պետք է գրվեն մնացած դեղերից առանձին՝ նշելով ստացվող դեղի անվանումը, դեղաչափը, քանակը (նաև տառերով), արտադրության սերիան, գինը: Ձևումներ և ուղղումներ չեն թույլատրվում:

13. Պահանջագիր-ապրանքագիրը գրվում է երեք օրինակից, ստորագրվում է բաժանմունքի վարիչի և ավագ բուժքրոջ, իսկ շտապ օգնության կայանում՝ կայանի վարիչի և ավագ բուժքրոջ կողմից ու հաստատվում տնօրենի կողմից: Դեղատունը համարակալում է պահանջագիր-ապրանքագրերը, երեք օրինակի վրա ապրանքագիր մասում գրվում են բացթողման քանակները և գնահատվում այն՝ նշելով նաև ընդհանուր գումարը:

14. Պահանջագիր-ապրանքագրի առաջին օրինակը դեղատնից ապրանքի հետ միասին ուղարկվում է բաժանմունք, մյուս երկուսը մնում է դեղատանը: Դեղատունը յուրաքանչյուր ամսվա վերջում ծախսված թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին հաշվետվություն է ներկայացնում հաշվապահություն (Ձև 3)՝ վերջինին կցելով պահանջագրի մեկ օրինակը: Պահանջագիր-ապրանքագրի մյուս օրինակը պահվում է դեղատանը 5 տարի ժամկետով:

15. Հիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում, շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների հերթապահ բժիշկը և ավագ բուժքրոջը դեղատնից ստացած թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի համար վարում են անվանաքանակական հաշվառման մատյան (Ձև 4): Մատյանի էջերը պետք է լինեն համարակալված, կարված և վավերացված բժշկական հաստատության տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությամբ ու կնիքով (առկայության դեպքում): Մեկ մատյանում թույլատրվում է լրացնել մի քանի դեղեր:

16. Հիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի նշանակումները ձևակերպվում են հիվանդության պատմագրի մեջ՝ բուժող բժշկի գրառումով, նշելով քանակը՝ թվերով և տառերով: Ձևումներ չի թույլատրվում: Միայն դեպքում ուղղումը կատարվում է բուժող բժշկի կողմից գրելով՝ «ուղղումն իմ կողմից է» և ստորագրվում է, այնուհետև ստորագրվում ու կնքվում է հիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատության տնօրենի կամ նրա տեղակալի կողմից:

17. Շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի նշանակումները կատարվում են դեպքի/կանչի վայրում, ձևակերպվում են կանչի թերթիկի մեջ բրիգադի բժշկի գրառումով՝ նշելով քանակը նաև տառերով: Ձևումներ չի թույլատրվում: Միայն դեպքում ուղղումը կատարվում է բուժող բժշկի կողմից գրելով՝ «ուղղումն իմ կողմից է» և ստորագրվում է, այնուհետև ստորագրվում ու կնքվում է շտապ և

անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատության տնօրենի կամ նրա տեղակալի կողմից:

18. Հիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն ու սպասարկում իրականացնող հաստատություններում բժշկի նշանակումով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ներարկումը/տրամադրումը պացիենտին կատարվում է հերթապահ բժշկի կողմից՝ պացիենտի հիվանդության պատմագրի մեջ գրառում կատարելով ներարկման կամ օգտագործման մասին, որը հաստատվում է բժշկի և բուժքրոջ ստորագրություններով: Հերթապահ բժիշկը թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի համար վարում է անվանաքանակական հաշվառման մատյան (Ձև 4): Մատյանի էջերը պետք է լինեն համարակալված, կարված և վավերացված բժշկական հաստատության տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությամբ ու կնիքով (առկայության դեպքում):

19. Շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում բրիգադի բժիշկը հերթապահության օրը կայանի ավագ բուժքրոջից ստանում է թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, որի համար ստորագրում է դրա համար նախատեսված համապատասխան մատյանում (Ձև 5): Մեկ մատյանում թույլատրվում է լրացնել մի քանի դեղեր:

20. Շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում բրիգադի բժշկի նշանակումով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ներարկումը/տրամադրումը պացիենտին կատարվում է բրիգադի բուժքրոջ կողմից բժշկի ներկայությամբ՝ կանչի թերթիկի մեջ գրառում կատարելով ներարկման կամ օգտագործման մասին:

21. Հիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող և շտապ ու անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում տնօրենի հրամանով ստեղծվում է մշտական գործող հանձնաժողով, երեք մարդուց ոչ պակաս կազմով, հաստատության տնօրենի տեղակալի նախագահությամբ, որը ոչնչացնում է օգտագործման համար ոչ պիտանի (պիտանելիության ժամկետը սպառված, վնասված, ջարդված, չօգտագործված) թմրամիջոցները և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը, որոնց ոչնչացման ժամանակ հանձնաժողովի կողմից կազմվում է արձանագրություն (Ձև 6)՝ 3 օրինակից: Դրանք ոչնչացվում են՝ ներգրավվելով ոստիկանության ներկայացուցչի: Ձև 6-ի պահպանման ժամկետը 3 տարի է:

22. Օգտագործումից հետո դատարկ մնացած դեղերի փաթեթները (բոլոր դեղաձևերի համար) ենթակա չեն վերադարձման:

23. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ոչնչացումը հիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում, շտապ ու անհետաձգելի բժշկական օգնություն իրականացնող հաստատություններում իրականացվում է՝

1) հեղուկ դեղաձևերը (ներարկման լուծույթներ, կաթիլներ, օշարակներ) ոչնչացվում են ամպուլաները և սրվակները ջարդելու միջոցով, իսկ պարունակությունը նոսրացվում է ջրով 1:100 հարաբերությամբ և լցվում է կոյուղու մեջ:

2) կարծր դեղաձևերը (փոշի, դեղահատ, դեղապատիճ) մանրացվում են մինչև փոշիանման զանգված, որը լուծվում է ջրով 1:100 հարաբերությամբ և լցվում է կոյուղու մեջ:

3) մյուս դեղաձևերը (սպեղանի, քսուք, մոմիկ) ոչնչացվում են այրման միջոցով, որպես բժշկական թափոն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

24. Բաժանմունքը, ինչպես նաև շտապ բուժօգնության կայանը յուրաքանչյուր ամսվա վերջում իր ծախսած թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին հաշվետվությունը ներկայացնում է հաշվապահություն՝ ոչ ուշ, քան մինչև հաջորդ ամսվա 7-ը (Ձև 7):

4. ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ԼՅՈՒԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ (ՄՏԱՑՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ԴՈՒՐՄ ԳՐՄԱՆ, ԲԱՑԹՈՂՄԱՆ, ՈՉՆՉՍՑՄԱՆ) ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑՄԱՆ ԶԵՎՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՊԱՄԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

25. Արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատության բժիշկն առնվազն երկու շաբաթը մեկ անգամ պետք է իրականացնի թմրամիջոցներ ստացող պացիենտների դիտարկում: Այն դեպքում, երբ պացիենտները զամված են անկողնում, արտահիվանդանոցային ձևով բժշկական

օգնություն և սպասարկում իրականացնող հաստատության բժշկի կողմից դիտարկումն իրականացվում է տանը:

26. Թմրամոլ պացիենտներին թմրամիջոցներով բուժման ընթացքում թմրամիջոցների տրամադրման հաճախականությունը (ամեն օր, շաբաթական 3 անգամ, շաբաթական 2 անգամ, շաբաթական 1 անգամ) որոշում է բուժող բժիշկը: Թմրամոլ պացիենտներին թմրամիջոցներով բուժման ընթացքում իրենց մշտական բնակության վայրից երկարատև բացակայության դեպքում բուժման շարունակական ընթացքն ապահովելու նպատակով բուժող բժիշկը կարող է տրամադրել թմրամիջոցներ պարունակող դեղեր բացակայության ողջ ընթացքի համար:

27. Արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի նշանակումները ձևակերպվում են ամբուլատոր բժշկական քարտում բուժող բժշկի գրառումով՝ նրանց քանակը նշելով տառերով: Ձևումներ չի թույլատրվում: Միայն դեպքում ուղղումը կատարվում է բուժող բժշկի կողմից գրելով՝ «ուղղումն իմ կողմից է» և ստորագրվում է, այնուհետև ստորագրվում ու կնքվում է արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատության տնօրենի կամ նրա տեղակալի կողմից:

28. Պացիենտներին կամ նրանց լիազորած անձանց թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր դեղատնից բաց են թողնվում միայն անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում՝ դեղատոմսային ձևաթղթում կատարելով նշումներ՝ այն ստացող անձի անձնագրային տվյալների, իսկ լիազորագրի առկայության դեպքում՝ լիազորված անձի անձնագրային տվյալների մասին: Ընդ որում, պացիենտներին կամ նրանց լիազորած անձանց թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր դեղատնից բաց են թողնվում, եթե ներկայացվում է.

1) անձը հաստատող փաստաթուղթ:

2) լիազորագիր՝ ստորագրված պացիենտի և բուժող բժիշկի կողմից և կնքված այն բժշկական հաստատության տնօրենի կողմից, որը ցուցաբերում է տվյալ բժշկական օգնությունը:

3) տվյալ դեղի ստացման համար անհրաժեշտ դեղատոմս:

29. Լիազորագիրը տրվում է 2 օրինակից, հաստատվում արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատության տնօրենի կողմից: Լիազորագրի մեկ օրինակը փակցվում է պացիենտի ամբուլատոր քարտին, իսկ մյուս օրինակը մնում է դեղատանը: Թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի դեղատոմսերի դարձերեսի վրա դեղատան աշխատողի կողմից պարտադիր լրացվում են բաց թողնման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը, ստացվող դեղի (դեղերի) փաստացի քանակը (տառերով), ստացողի անձնագրի տվյալները և ստացողի ստորագրությունը:

30. Օգտագործումից հետո դատարկ մնացած դեղերի փաթեթները (բոլոր դեղաձևերի համար) ենթակա չեն վերադարձման:

31. Չօգտագործված թմրամիջոցները և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը, հիվանդի կամ հիվանդի հարազատների կողմից վերադարձնելու դեպքում դրանք հանձնվում են արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատության տնօրենին կամ նրա տեղակալին: Չօգտագործված թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ընդունման և անվանաքանակական հաշվառման համար վարվում է մատյան (Ձև 8): Մեկ մատյանում թույլատրվում է լրացնել մի քանի դեղեր: Մատյանի էջերը պետք է լինեն համարակալված, կարված և վավերացված բժշկական հաստատության տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությամբ ու կնքով (առկայության դեպքում):

32. Արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում տնօրենի հրամանով ստեղծվում է մշտական գործող հանձնաժողով՝ 3 մարդուց ոչ պակաս կազմով, հաստատության տնօրենի տեղակալի նախագահությամբ, որը ոչնչացնում է օգտագործման համար ոչ պիտանի (պիտանելիության ժամկետը սպառված, վնասված, ջարդված, հիվանդի կամ հիվանդի հարազատների կողմից վերադարձնելու դեպքում չօգտագործված դեղերը) թմրամիջոցները և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը, ոչնչացման ժամանակ հանձնաժողովի կողմից կազմվում է արձանագրություն (Ձև 6)՝ 3 օրինակից: Դրանք ոչնչացվում են՝ ներգրավվելով ոստիկանության ներկայացուցչի: Ձև 6-ի պահպանման ժամկետը 3 տարի է: Ձև 6-ի գումարային սյունակը չի լրացվում արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատության կողմից:

33. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ոչնչացումն արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում իրականացվում է՝

1) հեղուկ դեղաձևերը (ներարկման լուծույթներ, կաթիլներ, օշարակներ) ոչնչացվում են ամպուլաները և սրվակները ջարդելու միջոցով, իսկ պարունակությունը նոսրացվում է ջրով 1:100 հարաբերությամբ և լցվում է կոյուղու մեջ:

2) կարծր դեղաձևերը (փոշի, դեղահատ, դեղապատիճ) մանրացվում են մինչև փոշիանման զանգված, որը լուծվում է ջրով 1:100 հարաբերությամբ և լցվում է կոյուղու մեջ:

3) մյուս դեղաձևերը (սպեղանի, քսուք, մոմիկ) ոչնչացվում են այրման միջոցով, որպես բժշկական թափոն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

34. Պացիենտի հարազատների կողմից թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) չօգտագործված նյութեր վերադարձնելու դեպքում՝ անհրաժեշտ է ներկայացնել մահը հաստատող վկայականի պատճենը, որտեղ նշված է մահվան վրա հասնելու ժամանակը (օրը, ժամը, պատճառը):

35. Արտահիվանդանոցային պայմաններում թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ստացող պացիենտների հոսպիտալացման դեպքում դադարեցվում է դրանց դուրս գրումն արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների կողմից: Դրանք տրամադրվում են հիվանդանոցային հաստատության կողմից՝ բացառությամբ թմրամոլ պացիենտների, որոնք ստանում են թմրամիջոցներով բուժում:

ՄԱՏՑԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՂԱՏԱՆԸ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ
(ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

(Դեղի անվանում, դեղաչափ, դեղաձև, փաթեթավորում)

| Հ/Հ | Սկզբնական մնացորդ | Մ ՈՒ Տ Ք | | | | | | | Ե Լ Ք | | | | | Մ Ն Ա Ց Ո Ր | |
|-----|----------------------|-------------------------|-----------------------|---------------|-------|-------------|--------|-------------------------------|-----------------------------|--------------|---------------|-------|---|-------------|--------|
| | | Ստացման ամիս/ամսաթիվ | Հաշիվ ապրանքագիր N | Չափման միավոր | Քանակ | Միավորի գին | Գումար | Դեղի արտադրության սերիա | Բաց թողնման ամիս ամսաթիվ | Պահանջագիր N | Չափման միավոր | Քանակ | Բաժանմունք, Ստացող հերթա- պահ լուծվող ստորագրություն | Քանակ | Գումար |
| | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | |

ՁեՎ 2

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Բժշկական հաստատության տնօրեն՝

ստորագրություն/ անուն, ազգանուն

« _____ » _____ 20 թ.

ՊԱՀԱՆՁԱԳԻՐ N

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Դեղատան աշխատող՝

ստորագրություն/ անուն, ազգանուն

« _____ » _____ 20 թ.

ԱՊՐԱՆՔԱԳԻՐ N

| Հ/Հ | Պահանջագիր | | | | Ապրանքագիր | | | |
|-----|------------------------------|---------|---------------|--|--|--------------------|-------------|------------------|
| | Նյութական արժեքների անվանում | Դեղաչափ | Չափման միավոր | Բաժանմունքի կողմից պահանջվող քանակ (տառերով) | Դեղատան կողմից բաց թողնվող քանակ (տառերով) | Արտադրության սերիա | Միավորի գին | Ընդհանուր գումար |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Բաժանմունքի վարիչ/կայանի վարիչ՝ _____
Անուն, ազգանուն/ ստորագրություն

Ավագ բուժբույր՝
/Ստացող/ _____
Անուն, ազգանուն/ ստորագրություն

Բաց թողեց՝ _____
Անուն, ազգանուն/ ստորագրություն

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Բժշկական հաստատության տնօրեն՝

ստորագրություն/ անուն, ազգանուն/ Կ.Տ
« _____ » _____ 20 թ.

ԴԵՂԱՏԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԾԱԽՍՎԱԾ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաշվետու ժամանակաշրջան « _____ » « _____ » 20 թ. առ « _____ » « _____ » 20 թ.

| Հ/Հ | Դեղի անվանում | Մնացորդ ամսվա սկզբին | | Գումար | ՄՈՒՏՔ | | ԵԼՔ | | ՄՆԱՑՈՐԴ | |
|-----|---------------|----------------------|-------------|--------|-------|--------|-------|--------|---------|--------|
| | | Քանակ | Սիավորի գին | | Քանակ | Գումար | Քանակ | Գումար | Քանակ | Գումար |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |

Դեղատան աշխատող՝ _____
Անուն, ազգանուն/ ստորագրություն

ՄԱՏՅԱՆ

ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՑԻՆ ՁԵՎՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ,
 ՇՏԱՊ ԵՎ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՐԹԱՊԱՀ
 ԲԺՇԿԻ ԵՎ ԱՎԱԳ ԲՈՒԺՔՐՈՋ ԿՈՂՄԻՑ ԴԵՂԱՏՆԻՑ ՍՏԱՅՎԱԾ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ)
 ՆՑՈՒԹԵՐԻ ԱՆՎԱՆԱՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ

(Բաժանմունքի անվանում)

(Դեղի անվանում, դեղաչափ, դեղաձև, փաթեթավորում)

| Մ Ո Ւ Տ Ք | | | | | | | Ե Լ Ք | | | | | Մ Ա Ց Ո Ր Դ |
|-----------|-------------------------|---|---------------|-------|--------|------------------------------|-----------------------------|---|---------------|-------|---|-------------|
| Հ/Հ | Ստացման ամիս/ամսաթիվ | Պահանջագիր կամ հաշիվ ապրանքագիր N | Չափման միավոր | Քանակ | Գումար | Դեղի արտա- դրության սերիա | Բաց թողնման ամիս ամսաթիվ | Հիվանդության պատմության N (ծախսած քանակ)N | Չափման միավոր | Քանակ | Հերթապահ բժշկի, անուն, ազգանուն, ստորագրություն | Քանակ |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |

ՄԱՑՑԱՆ
ՇՏԱՊ ԵՎ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԲՐԻԳԱԴԻ ՀԵՐԹԱՊԱՀ ԲԺՇԿԻ, ԿԱՑԱՆԻ ԱՎԱԳ ԲՈՒԺՔՐՈՋԻՑ ՍՏԱՑԱԾ, ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ
(ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ԱՆՎԱՆԱՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ

(Դեղի անվանում, դեղաչափ, դեղաձև, փաթեթավորում)

(Գին)

| Հ/Հ | Կանչի ամիս/ ամսաթիվ | Կանչի համար | Պացիենտի անուն, ազգանուն, հայրանուն | Բնակության վայր | Հեռախոսահամար | Ախտորոշում | Դեղաչափ | Հերթապահ բժշկի անուն, ազգանուն, ստորագրություն |
|-----|---------------------|-------------|-------------------------------------|-----------------|---------------|------------|---------|--|
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Բժշկական հաստատության տնօրեն՝

_____ անուն, ազգանուն/ ստորագրություն/ Կ.Տ
« _____ » _____ 20 թ.

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ (ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՄՊԱՌՎԱԾ, ՎՆԱՄՎԱԾ, ՋԱՐԴՎԱԾ,
ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ) ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

| Հ/Հ | Նյութական արժեքների անվանում | Դեղաչափ | Չափման միավոր | Քանակ | Գումար |
|-----|------------------------------|---------|---------------|-------|--------|
| | | | | | |
| | | | | | |

1. Բժշկական հաստատության տնօրենի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)՝

_____ անուն, ազգանուն/ ստորագրություն

2. Հանձնաժողովի անդամներ՝

_____ անուն, ազգանուն/ ստորագրություն

_____ անուն, ազգանուն/ ստորագրություն

_____ անուն, ազգանուն/ ստորագրություն

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
 Բժշկական հաստատության տնօրեն՝

ստորագրություն/ անուն, ազգանուն
 « _____ » _____ 20 թ

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ, ԻՆՉՊԵՍՆԱԵՎ ՇՏԱՊ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ
 ԿԱՑԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԾԱԽՄՎԱԾ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՑՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հաշվետու ժամանակաշրջան « _____ » « _____ » 20 թ. առ « _____ » « _____ » 20 թ.

(Բաժանմունքի անվանում)

| Հ/Հ | Դեղի անվանում | Մնացորդ ամսվա սկզբին | | ՄՈՒՏՔ | | ԵԼՔ | | ՄՆԱՑՈՐԴ | |
|-----|---------------|----------------------|--------|-------|--------|-------|--------|---------|--------|
| | | Քանակ | Գումար | Քանակ | Գումար | Քանակ | Գումար | Քանակ | Գումար |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |

Բաժանմունքի վարիչ/կայանի վարիչ՝

Անուն, ազգանուն/ ստորագրություն

Ավագ բուժքույր՝

Անուն, ազգանուն/ ստորագրություն

ՄԱՏՅԱՆ
ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ

(Դեղի անվանում, դեղաչափ, դեղաձև, փաթեթավորում)

| Հ/Հ | Վերադարձի օր, ամիս, ամսաթիվ | Պացիենտի անուն, ազգանուն, հայրանուն | Ծննդյան օր, ամիս, ամսաթիվ | Բնակության վայր | Ախտորոշում | Դեղաչափ | Վերջին անգամ ստացված քանակ | Վերադարձման պատճառ | Մահվան, հոսպիտալացման կամ այլ դեպքերում՝ օր, ամիս ամսաթիվ | Վերադարձրած քանակ | Վերադարձնողի կամ լիազորված անձի անուն, ազգանուն, ստորագրություն |
|-----|-----------------------------|-------------------------------------|---------------------------|-----------------|------------|---------|----------------------------|--------------------|---|-------------------|---|
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«25» մարտի 2020թ.

N 45

ք.Ստեփանակերտ

**ԲՈՒՑՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՎԱՃԱՌՔԻ
ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 20-րդ, 22-րդ և 26-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության լիցենզավորման հանձնաժողովի 2020 թվականի մարտի 25-ի N 02 եզրակացությունը և «Դավիթ Դանիելյան Մառլենի» անհատ ձեռնարկատիրոջ 2020 թվականի մարտի 18-ին ներկայացրած լիցենզիա ստանալու մասին հայտը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Բավարարել «Դավիթ Դանիելյան Մառլենի» անհատ ձեռնարկատիրոջ լիցենզիա ստանալու մասին հայտն ու տրամադրել բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի N 000026 լիցենզիա.

2. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնին՝

1) գրանցել տրված լիցենզիայի մասին տեղեկությունը համապատասխան գրանցամատյանում.

2) ապահովել սույն հրամանի առաքումը Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ հրապարակման համար:

Ժիրայր Միրզոյան

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«20» մարտի 2020թ.

N 55

ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՍԻ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐՈՎ
ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐԱՓՈՒՄԱԴՐՈՒՄՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ
ՆԵՐԴԻՐՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՂԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2020 թվականի մարտի 20-ի N 354-SՆ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Տրամադրել՝

1) **անհատ ձեռնարկատեր Ալբերտ Ռուբենի Խաչատրյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00749 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր.

2) **ֆիզիկական անձ Անուշավան Կառլենի Ազիզյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00642 լիցենզիայի N00003 ներդիր.

3) **ֆիզիկական անձ Արսեն Արթուրի Զաքարյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00659 լիցենզիայի N00003 ներդիր:

2. Դադարեցնել՝

1) **ֆիզիկական անձ Վահան Լևոնի Հարությունյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00619 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

2) **ֆիզիկական անձ Անուշավան Կառլենի Ազիզյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00642 լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունը.

3) **ֆիզիկական անձ Արսեն Արթուրի Զաքարյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00659 լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունը:

3. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում Բաղաքացիական գործ ԸԲԴ/1603/02/18
Բաղաքացիական գործ ԸԲԴ/1603/02/18
Նախագահող դատավոր՝ Ռ.Ջհանգիրյան
Դատավորներ՝ Մ.Ավանեսյան
Ն.Գրիգորյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ 03-ին մարտի 2020 թվական

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

| | |
|-----------------------------|----------------|
| նախագահությամբ՝ | Ն.Նարիմանյանի, |
| մասնակցությամբ՝ դատավորներ՝ | Հ.Աբրահամյանի, |
| | Ա.Աբրահամյանի, |
| | Հ.Խաչատրյանի, |
| | Ի.Կարապետյանի, |

դռնբաց դատական նիստում քննության առնելով ըստ հայցի Կարո Արտաշեսի Հակոբյանի ընդդեմ Հարություն Արմիկի Գասպարյանի, Ստեփանակերտի քաղաքային համայնքի և ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության՝ հողամասի նկատմամբ նախապատվության իրավունքը ճանաչելու, Ստեփանակերտի քաղաքապետի որոշումը, հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիրը և դրա հիման վրա կատարված պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների վերաբերյալ ԸԲԴ/1603/02/18 քաղաքացիական գործով ԱՀ վերաքննիչ դատարանի 2019 թվականի դեկտեմբերի 09-ի որոշման դեմ հայցվորի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանի բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

Կարո Արտաշեսի Հակոբյանը (այսուհետ՝ Հայցվոր) Հարություն Արմիկի Գասպարյանի, Ստեփանակերտի քաղաքային համայնքի և ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության դեմ 2018 թվականի հունիսի 28-ին հայցադիմում է ներկայացրել Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան), խնդրելով ճանաչել Ստեփանակերտ քաղաքի Ալ.Հեքիմյան 1/69 հասցեով՝ 24 քմ մակերեսով հողամասի նկատմամբ իր ձեռքբերման նախապատվության իրավունքը, անվավեր ճանաչել Ստեփանակերտի քաղաքապետի 18.10.2017թ. թիվ 198Ա որոշումը, դրա հիման վրա Ստեփանակերտի քաղաքապետի և Հարություն Գասպարյանի միջև կնքված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 15.11.2017թ. թիվ 99 պայմանագիրը և պայմանագրի հիման վրա կատարված պետական գրանցումը:

Առաջին ատյանի դատարանի 2018 թվականի հունիսի 29-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և հարուցվել քաղաքացիական գործ:

Առաջին ատյանի դատարանի 2018 թվականի օգոստոսի 01-ի որոշմամբ

հայցի ապահովման միջոց կիրառելու մասին Հայցվորի միջնորդությունը մերժվել է:

Առաջին ատյանի դատարանի 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշմամբ քաղաքացիական գործով հրավիրվել է նախնական դատական նիստ:

Առաջին ատյանի դատարանի 2018 թվականի հոկտեմբերի 17-ի որոշմամբ քաղաքացիական գործը դատական քննության է նշանակվել:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի փետրվարի 05-ի վճռով հայցը մերժվել է:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի փետրվարի 05-ի վճռի դեմ Հայցվորի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը 2019 թվականի մարտի 05-ին ներկայացրել է վերաքննիչ բողոք:

Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2019 թվականի մարտի 13-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը վարույթ է ընդունվել և դատական նիստ հրավիրվել:

Վերաքննիչ դատարանը 2019 թվականի ապրիլի 05-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի փետրվարի 05-ի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի 2019 թվականի ապրիլի 05-ի որոշման դեմ Հայցվորի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը 2019 թվականի մայիսի 06-ին ներկայացրել է վճռաբեկ բողոք:

Գերագույն դատարանի 2019 թվականի մայիսի 24-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

Գերագույն դատարանի 2019 թվականի հունիսի 25-ի որոշմամբ Հայցվորի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանի վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակի. Վերաքննիչ դատարանի 2019 թվականի ապրիլի 05-ի որոշումը բեկանվել և գործն ուղարկվել է Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի հուլիսի 03-ի որոշմամբ քաղաքացիական գործը վարույթ է ընդունվել և դատաքննության նշանակվել:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի հոկտեմբերի 01-ի վճռով հայցը մերժվել է:

Նշված վճռի դեմ Հայցվորի ներկայացուցիչ Վլադիմիր Հայրապետյանը 2019 թվականի նոյեմբերի 01-ին ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ խնդրելով բեկանել ԸԻԴ/1603/02/18 քաղաքացիական գործով Առաջին ատյանի դատարանի 01.10.2019թ. վճիռը և այն փոփոխել՝ կայացնելով դատական ակտ ներկայացված հայցը բավարարելու մասին:

Վերաքննիչ դատարանի 2019 թվականի նոյեմբերի 06-ի որոշմամբ բողոքն ընդունվել է վարույթ և նշանակվել դատական քննության:

Վերաքննիչ դատարանի 2019 թվականի դեկտեմբերի 09-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է. Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի հոկտեմբեր 01-ի վճիռը մասնակիորեն՝ հողամասի նկատմամբ նախապատվության իրավունքը ճանաչելու պահանջը մերժելու մասով, թողնվել է օրինական ուժի մեջ, իսկ Ստեփանակերտի քաղաքապետի 18.10.2017թ. թիվ 198Ա որոշումը, դրա հիման վրա Ստեփանակերտի քաղաքապետի և Հարություն Գասպարյանի միջև կնքված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 15.11.2017թ. թիվ 99 պայմանագիրը և պայմանագրի հիման վրա կատարված պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասով գործի վարույթը՝ կարճվել:

Նշված որոշման դեմ Հայցվորի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը 2020 թվականի հունվարի 09-ին ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և հայցը բավարարելու խնդրանքով:

Վճռաբեկ բողոքի գրավոր պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն առերևույթ խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ, 44-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ, 99-րդ, 121-րդ, 122-րդ հոդվածների պահանջները:

Նշված պնդումը բողոքաբերը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Ըստ բողոքի՝ Հայցվորը հայցադիմումով հայտնել, իսկ դատարանում ցուցմունք է տվել, որ Ստեփանակերտ քաղաքի Հեքիմյան 1 հասցեով բազմաբնակարան շենքի բակում 1990 թվականից փաստացի օգտագործում է հողամաս, որի մի մասի՝ 24քմ մակերեսի վրա, ի սկզբանե, նախատեսել էր կառուցել ավտոտնակ: Դրանով պայմանավորված, 2010թ. սեպտեմբերի 11-ին դիմել էր Ստեփանակերտի քաղաքապետին, խնդրելով ավտոտնակի կառուցման նպատակով տրամադրել հողամասը և դիմումին կից ներկայացրել էր անհրաժեշտ ու պահանջված փաստաթղթերը, որոնց թվում՝ նաև 08.10.2010թ. կազմված ակտը, որը ստորագրված էր հարևանների, այդ թվում՝ Հարություն Գասպարյանի մայր ծնողի կողմից: Իր այդ դիմումին 25.11.2010թ. համայնքից տրամադրվել է պատասխան, ըստ որի՝ հարցին կանդիդատնան տվյալ շենքի բարեկարգման աշխատանքներն ավարտելուց հետո: Այդ պատասխանից հետո, ամեն անգամ այցելելով քաղաքապետարան՝ ստանում էր պատասխան, որ դեռ հատկացումներ չկան:

Նշել է նաև, որ 2018 թվականի մարտի 13-ին Հայցվորը պատահական տեղեկացել է, որ այդ հողամասը տրամադրել են հարևանությամբ բնակվող Հարություն Գասպարյանին՝ քաղաքապետի 18.10.2017թ. թիվ 1984Ա որոշմամբ և կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրով:

Ըստ բողոքաբերի՝ սույն քաղաքացիական գործով Գերագույն դատարանը բեկանել է ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել լրիվ ծավալով նոր քննության, քանի որ իր անհամաձայնությունն էր հայտնել դատարանի վճռին նաև այն մասով, որ չեն քննվել Հայցվորի բոլոր պահանջները:

Ըստ բողոքաբերի՝ այս գործով Գերագույն դատարանը նշել էր, որ պետք է քննարկման առարկա դարձնել վարչական մարմնի կամայական մոտեցման շարժառիթները և առնվազն պարզել, թե ինչու է անձի ընթացքի մեջ գտնվող դիմումն անտեսվել ու նույն գույքն այլ անձի հատկացվել: Մակայն, ստորադաս դատարանն այս մասով ևս կրկնել է նախկին դատական ակտերում թույլ տրված սխալները: Նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանն ավելի շատ ծավալվել է հայցի առարկային, հիմքին, ապացուցման առարկային և հայցի «իրավական հիմքին» վերաբերող հարցերի վրա, սակայն այդպես էլ չի պարզել գործով հաստատման կամ պարզման ենթակա հանգամանքներն ու փաստերը: Մակայն, հաստատված չի համարել, որ հողամասն ավելի քան տասը տարի անընդմեջ և բացահայտ օգտագործել է Հայցվորը, իսկ պետական գրանցման և հողհատկացման հիմքերի մասով էլ արձանագրելով այս կամ այն իրավանդորդ, հանգել է այն հետևության, որ առկա չեն բավարար հիմքեր Հայցվորի իրավունքի խախտման փաստով քաղաքապետի որոշումն անվավեր ճանաչելու համար:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը, վերլուծելով հողային օրենսգրքի 72-րդ հոդվածը, դրանից բխող հետևությունները, նշելով լուսանկարներից երևացող հանգամանքները, հանգել է այն հետևության, որ դատարանը սկզբնական պահանջի մասով ճիշտ էլքով է դատական ակտ կայացրել ու կրկին այլ հիմնավորումներով դատական ակտն այդ մասով թողել է օրինական ուժի մեջ, ուստի և թույլ է տվել նույն խախտումները, որպիսիք վերագրվում են Առաջին ատյանի դատարանին: Իսկ ինչ վերաբերում է գործի վարույթը մասով կարճելուն, ապա ստորադաս դատարանն առերևույթ սխալ է մեկնաբանել դատավարական իրավունքի նորմերը և անհիմն կիրառել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին մասը:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը բողոքաբերը հիմնավորել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այսինքն՝ բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և ստորադաս դատարանների կողմից առերևույթ թույլ են տրվել դատական սխալներ:

Նշված պնդումը բողոքաբերը հիմնավորել է նրանով, որ հայցն իր հիմքերի և հիմնավորումների սահմաններում չքննելը, ապացույցները սխալ գնահատելը, գործի վարույթը մասով կարճելը հանգեցրել են նյութական և դատավարական իրավունքի նորմերի էական խախտումների, քանի որ նույն հողամասի մասով առկա վեճի պայմաններում կասկածի տակ դնելն այն փաստը, որ ինքը 2010թ. նույն հողամասի մասին չի դիմել, կամ արդեն իսկ հողամասը հատկացված լինելը հիմք է հայցի մերժման մասին վճիռ կայացնելու համար, անհիմն է, ելնելով նրանից, որ հայցվորը պահանջել է ճանաչել իր իրավունքը՝ նախքան հատկացումը եղած դրությամբ: Դրանցից բացի, պատշաճ գնահատական տրված չէ նաև համայնքի ղեկավարի գործողություններին, քանի որ նույն հողամասի վերաբերյալ երկու դիմումի առկայության պայմաններում հողամասը պետք է աճուրդի դրվեր:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, բողոքարկվող մասով բեկանել Վերաքննիչ դատարանի ԸԴԴ 1603/02/18թ. քաղաքացիական գործով 09.12.2019թ. որոշումը և փոփոխել, կայացնել դատական ակտ՝ ներկայացված հայցերն ամբողջությամբ բավարարելու մասին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հայցվորը 2010 թվականի սեպտեմբերի 22-ին դիմել է Ստեփանակերտի քաղաքապետին խնդրելով Ստեփանակերտ քաղաքի Հեքիմյան փողոցի համար 1 շենքի մոտակայքից իրեն հողատարածք հատկացնել՝ ավտոտնակ կառուցելու համար /գ.թ. 20/: Դիմումին կցել է երկու հարևանի կողմից ստորագրված ակտն այն մասին, որ նա 1990 թվականից Հեքիմյան փողոցի համար 1 հասցեում գտնվող հողամասը փաստացի օգտագործում է /գ.թ.19/:

2. Ստեփանակերտի քաղաքապետի 2010 թվականի նոյեմբերի 25-ի գրությամբ Հայցվորը տեղեկացվել է, որ նշված շենքի շրջակայքում ավտոտնակ կառուցելու հարցին կանդիդատության տվյալ տարածքի բարեկարգման աշխատանքներն ավարտելուց հետո /գ.թ.26/:

3. Պատասխանող Հ.Գասպարյանը 2017 թվականի հուլիսի 7-ին դիմել է Ստեփանակերտի քաղաքապետին խնդրելով շենքի մոտակայքից հատկացնել հողատարածք՝ ավտոտնակի կառուցման համար /գ.թ.34/:

4. Ստեփանակերտի քաղաքապետի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի համար 1984Ա որոշմամբ Ստեփանակերտ քաղաքի Ալ.Հեքիմյան փողոցի համար 1 շենքի շրջակայքում գտնվող 24.0 քառ.մետր մակերեսով հողամասն ավտոտնակի կառուցման համար կառուցապատման իրավունքով հատկացվել է պատասխանող Հ.Գասպարյանին: Հասցեն համարվել Ալ.Հեքիմյան փողոց համար 1/69 /գ.թ.28/:

5. Հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 15.11.2017թ. թիվ 99 պայմանագրի համաձայն՝ Ստեփանակերտի քաղաքային համայնքը պարտավորվել է կառուցապատման նպատակով սահմանված վճարի դիմաց Հ.Գասպարյանին տրամադրել 24.0 քառ. մետր մակերեսով հողամաս, որը գտնվում է ք.Ստեփանակերտ, Ալ.Հեքիմյան 1/69 հասցեում: Կառուցապատման իրավունքի ժամկետը սահմանվել է 2017 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2022 թվականի նոյեմբերի 15-ը /գ.թ.30/:

6. Պատասխանող Հ.Գասպարյանի կառուցապատման իրավունքը վերը նշված հողամասի նկատմամբ ստացել է պետական գրանցում 2017 թվականի դեկտեմբերի 06-ին՝ թիվ 01-001-0042-0183 կադաստրային ծածկագրի ներքո /գ.թ.44/:

7. Գերագույն դատարանը՝ սույն գործը նոր քննության ուղարկելու մասին 2019 թվականի հունիսի 25-ի որոշմամբ արձանագրելով Հայցվորի կողմից թվով չորս պահանջ ներկայացված լինելու փաստը, գտել է, որ ստորադաս դատարանները լիարժեք քննություն չեն իրականացրել ձեռքբերման վաղեմության ինստիտուտի և պատշաճ վարչարարություն իրականացված չլինելու հայցի հիմքերի վերաբերյալ:

8. Առաջին ատյանի դատարանը, գործի նոր քննության արդյունքներով անդրադարձել է ձեռքբերման վաղեմության ինստիտուտին, այդ մասով հայցը մերժել, իսկ մյուս հայցապահանջները մերժել է՝ Հայցվորի մոտ իրավական շահագրգռվածության բացակայության հիմքով:

9. Վերաքննիչ դատարանը, ներկայացված հայցը դիտարկելով որպես երկու ինքնուրույն՝ քաղաքացիական և վարչական դատավարության կարգով քննման ենթակա պահանջների համակցություն՝ ձեռքբերման վաղեմության մասով դատական ակտը թողել է օրինական ուժի մեջ, իսկ մնացած մասով՝ գործի վարույթը կարճել՝ ընդդատության կանոնների խախտման հիմքով:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝ Գերագույն դատարանի որոշումը կարող է եսկան նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքում բարձրացված է երկու հարցադրում, որոնցից առաջինը վերաբերում է «ձեռքբերման վաղեմության», իսկ երկրորդը՝ «ընդդատության» ինստիտուտներին:

Ձեռքբերման վաղեմության ինստիտուտի իրավական վերլուծության վերաբերյալ ստորադաս դատարանների դատողություններն ու դրանց արդյունքում կայացված եզրահանգումները դիտարկելով օրենսդրական կարգավորումների և հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի նախկինում, այդ թվում նաև՝ սույն քաղաքացիական գործով արտահայտած դիրքորոշումների համատեքստում, Գերագույն դատարանն արձանագրում է, որ և Առաջին ատյանի, և Վերաքննիչ դատարանները նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտում թույլ չեն տվել:

Ինչ վերաբերում է «ընդդատությանը», ապա Գերագույն դատարանն իր նախկինում՝ ԸԻԴ/1937/02/16 քաղաքացիական գործով 2017 թվականի մարտի 21-ին կայացրած որոշմամբ արձանագրել է հետևյալը. «Հաշվի առնելով, որ սույն գործով վեճը ենթակա էր քննության վարչական դատավարության կարգով, ուստի ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, սույն քաղաքացիական գործի վարույթը ենթակա է կարճման»:

Գերագույն դատարանը, հաշվի առնելով անձի արդար դատաքննության իրավունքի իրացման և գործի քննության ողջամիտ ժամկետի պահպանման հրամայականը, գտնում է, որ Արցախի Հանրապետությունում գործող իրավական կառուցակարգերի շրջանակներում անհրաժեշտ է փոխել նախկինում արտահայտած դիրքորոշումն ու իրավունքի զարգացման նպատակով նոր դիրքորոշում հայտնել քաղաքացիական դատավարության շրջանակներում ընդդատության խախտման հետևանքների առումով:

Այսպես՝ ԱՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Քաղաքացիական շրջանառության մասնակիցներն իրենց սուբյեկտիվ իրավունքների, ազատությունների և օրինական շահերի դատական պաշտպանությունն իրականացնում են օրենքով սահմանված կարգով դատարան հայցադիմում (դիմում) ներկայացնելու միջոցով: Հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից:

Արդար դատաքննության իրավունքը մարդու՝ դատական պաշտպանության իրավունքի իրականացումն ապահովելուն ուղղված միջազգային և ներպետական նորմերով ամրագրված և երաշխավորվող սուբյեկտիվ դատավարական իրավունքների համակցություն է, որը յուրաքանչյուրին ապահովում է օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անկողմնակալ դատարան առանց խոչընդոտի դիմելը, երաշխավորում է գործի քննությունը հրապարակայնության, կողմերի հավասարության և մրցակցության պայմաններում իրականացվելը, ապահովում է հիմնավորված դատական ակտ ստանալը, ինչպես նաև երաշխավորում է դատական պաշտպանության իրավունքի խախտմանը հանգեցնող արդար դատաքննության իրավունքի մաս կազմող որևէ իրավունքի խախտման վերացման հնարավորությունը:

Դատական պաշտպանության իրավունքը ենթադրում է նախևառաջ խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանության և վերականգնման պահանջով դատարան դիմելու անձի իրավունքը, իսկ մյուս կողմից՝ դատարանի պարտականությունը՝ քննելու գործը և նրանով կայացնելու օրինական և հիմնավորված որոշում: Խախտված իրավունքի պաշտպանության պահանջով յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի դիմելու դատարան: Ընդ որում՝ քաղաքացիական շրջանառության մասնակիցներն առաջին ատյանի դատարան են դիմում հայցադիմում (դիմում) ներկայացնելու միջոցով: Հետևաբար, դատարան դիմելու իրավունքն ուղղակիորեն բխում է անձի դատական պաշտպանության իրավունքի բովանդակությունից, որն ապահովելու պարտականությունն ընկնում է պետության վրա:

Դատական պաշտպանության իրավունքին համապատասխանում է Սահմանադրության 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Արցախի Հանրապետությունում գործող ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ և Գերագույն դատարանների պարտականությունը՝ քաղաքացիական դատավարության կարգով իրականացնելու տվյալ սուբյեկտիվ իրավունքը:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է հանդիսանում անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատությանն օրենքով հանձնված է տվյալ գործը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական բոլոր գործերն ընդդատյա են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին (այսուհետ՝ առաջին ատյանի դատարան): Նույն դատարանի քննությանն են ենթակա նաև վարչական դատավարության կարգով ներկայացվող հայցադիմումները (դիմումները):

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը՝ որպես դատական պաշտպանության իրավունքի հետ կապված համասեռ հասարակական հարաբերությունները կարգավորող հիմնական նորմերը համակարգված և կանոնակարգված ձևով շարադրող օրենք, սահմանում է Արցախի Հանրապետությունում դատարան դիմելու կարգն ու պայմանները: Դատարան դիմելու օրենքով սահմանված կարգը, ըստ էության, քաղաքացիների և իրավաբանական անձանց՝ դատարան դիմելու իրավունքի իրականացման երաշխիք է:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա:

Գերագույն դատարանը փաստում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանում է այն պարտադիր պայմանները, որոնց պահպանման դեպքում հայցը ենթակա է վարույթ ընդունման: Այդ պայմաններից մեկն էլ հանդիսանում է ընդդատությունը: Վերջինս հանդիսանում է ոչ թե որպես դատարան դիմելու իրավունքի **առաջացման (ծագման)** պայման, այլ դատարան դիմելու իրավունքի **իրականացման** պայման, քանի որ ընդդատության ինստիտուտի ինդիքը հանդիսանում է այն դատական մարմնի որոշումը, որն իրավասու է քննելու և լուծելու կոնկրետ բնույթի իրավաբանական գործը:

Այս առումով կարևոր է տարանջատել ընդդատությունը՝ ենթակայությունից: Թեև ընդդատությունն ու ենթակայությունը ունեն ընդհանուր շփման եզրեր (երկուսն էլ իրավասության տարր են), ակնհայտ է նաև այն, որ դրանք ունեն մի շարք տարբերություններ: Ընդդատությունը՝ դա միայն դատարանների (և ոչ թե տարբեր պետական մարմինների) միջև իրավաբանական վեճ լուծելու լիազորության տեղաբաշխումն է, իսկ ենթակայությունը՝ իրավաբանական գործերը լուծելու լիազորությունների տեղաբաշխումն է դատական և ոչ դատական մարմինների միջև:

Ընդդատությունն իրենից ներկայացնում է ենթակայության հետագա զարգացումը: Ենթակայությունը և ընդդատությունը, չնույնանալով միմյանց հետ, ուղղված են կոնկրետ գործը քննելու և լուծելու հարցում դատարանի լիազորությունների պարզմանը: Սկզբում դատարանին անհրաժեշտ է պարզել, թե տվյալ վեճը ենթակա է արդյոք դատարանին ընդհանրապես, որից հետո պարզել, թե դատարաններից կոնկրետ որին է այն ընդդատյա:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ նշված ինստիտուտների տարանջատման հիմնական պատճառն այն հետևանքների տարբերության մեջ է, որոնք վրա են հասնում ենթակայության և ընդդատության կանոնների չպահպանման արդյունքում: Ենթակայությունը և ընդդատությունը միմյանցից սահմանազատվում են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված հայցադիմումը վերադարձնելու (82-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ) և հայցադիմումի ընդունումը մերժելու (81-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ), ինչպես նաև արդեն իսկ վարույթ ընդունված և քննված գործի պարագայում՝ գործը նոր քննության ուղարկելու կամ գործի վարույթը կարճելու դատավարական հետևանքների օգնությամբ:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին մասի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարաններում (այսուհետ՝ դատարաններ) քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում

է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենսգրքով, Արցախի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը 99-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «ենթակա չէ դատարանում» բառակապակցության մեջ «դատարան» հասկացության տակ ի նկատի է ունեցել ոչ թե քաղաքացիական գործեր քննող ընդհանուր իրավասության առաջին աստյանի դատարանին (ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածն այդ դատարանի համար օգտագործում է «առաջին աստյանի դատարան» տերմինը), այլ դատարանն ընդհանրապես: Հետևաբար, քաղաքացիական գործերով հարուցված վարույթը չի կարող կարճվել ընդդատության կանոնի խախտման հիմքով՝ վեճը ենթակա չէ դատարանում քննության ձևակերպմամբ:

Նշվածը փաստվում է նաև ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230.4-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումներով: Վերջինիս համաձայն.

«... Դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

(...).

6) գործը քննվել է ընդդատության կանոնների խախտմամբ.

(...).

9) առկա են սույն օրենսգրքի 99-րդ հոդվածով սահմանված՝ գործի վարույթը կարճելու հիմքերը:»:

Ակնհայտ է, որ օրենսդիրն ընդդատության կանոնների խախտումը չի նույնացրել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածով սահմանված գործի վարույթը կարճելու հիմքերի առկայության հետ, այլ՝ դրանք դիտել է որպես ինքնուրույն դատավարական նորմի խախտումներ: Այս առումով, չեն կարող նույնական համարվել նաև ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նախատեսված «վեճը ենթակա չէ դատարանում քննության» և «ընդդատության խախտում» հասկացությունները, ուստի՝ տարբեր պետք է լինեն նաև դրանց դատավարական հետևանքները:

Նշվածներից ելնելով Գերագույն դատարանը գտնում է, որ ընդդատության կանոնների խախտմամբ Առաջին աստյանի դատարանի կողմից գործի քննության դեպքում վերադաս դատական աստյանն անվերապահորեն պետք է բեկանի դատական ակտը, սակայն գործի վարույթը կարճել չի կարող, այլ այն պետք է ուղարկի ստորադաս դատարան՝ ընդդատության կանոնների պահպանմամբ նոր քննության:

Նշվածներն արտածելով սույն գործի փաստական հանգամանքների վրա, Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

Ինչպես հետևում է սույն գործի նյութերից՝ Հայցվորը ներկայացրել է չորս պահանջ՝ վիճելի հողամասի նկատմամբ 18.10.2017թ. դրությամբ ունեցած նախապատվության իրավունքը ճանաչելու, Ստեփանակերտի քաղաքապետի՝ Հ.Գասպարյանին կառուցապատման իրավունքով հողամաս հատկացնելու մասին 18.10.2017թ. որոշումը, որոշման հիման վրա Ստեփանակերտի քաղաքապետի և Հարություն Գասպարյանի միջև կնքված՝ հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 15.11.2017թ. թիվ 99 պայմանագիրը և պայմանագրի հիման վրա կատարված պետական գրանցումն անվավեր ճանաչելու մասին: Ընդ որում, հայցադիմումում նշվում են և՛ հողամասը նախապատվության իրավունքով տրամադրելու, և՛ նույն հողամասի վերաբերյալ Ստեփանակերտի քաղաքապետին նախկինում դիմում ներկայացրած լինելու մասին:

Սույն քաղաքացիական գործով Գերագույն դատարանն արդեն իսկ արձանագրել է, որ Առաջին աստյանի դատարանը, հայցադիմումն ընդունելով վարույթ, առաջին հերթին պետք է պարզի, թե որոնք են հայցի առարկան և հիմքերը, ներկայացված հայցապահանջների բնույթը, որպեսզի ապահովի մեկ

գործի սահմաններում վեճի արդար և արդյունավետ քննությունը և որոշում կայացվի բոլոր պահանջների վերաբերյալ (լինի դա հայցվորի օգտին, թե՛ հակառակը): Գերագույն դատարանն արձանագրել է, որ հայցի հիմքը, որպես հայցի բովանդակության տարր, հայցը բնութագրում է այն տեսանկյունից, թե ինչ իրավաբանական փաստերի հիման վրա է հայցվորը խնդրում պաշտպանել իր նյութաիրավական պահանջը: Այդ իրավաբանական փաստերն էլ հենց հանդիսանում են հայցի հիմքը: Դատարանը կաշկանդված չէ հայցվորի հայտարարած փաստերի իրավական որակմամբ և պարտավոր է իրավական գնահատական տալ, իրավաբանորեն որակել հենց հայցվորի ցույց տված իրավաբանական փաստերը: Ընդ որում, ի տարբերություն հայցի հիմքի իրավաբանական փաստերի, հայցի իրավական հիմնավորումը հայցվորի կողմից կարող է փոփոխվել վարույթի բոլոր փուլերում, այդ թվում՝ դատաքննության ժամանակ, ինչպես նաև վերաքննիչ և վճռաբեկ վերանայման ընթացքում: Քաղաքացիական գործի քննության և լուծման համար անհրաժեշտ իրավական նորմերը որոշելը և կիրառելը դատարանի պարտականությունն է: Դատարանը բոլոր դեպքերում դատական քննության ենթակա վիճելի իրավահարաբերությունը կարգավորող նորմերը ընտրում և կիրառում է՝ ելնելով հայցի հիմքում ընկած իրավաբանական փաստերից, այլ ոչ թե հայցվորի վկայակոչած իրավական նորմերից/որոնք կարող են նույնիսկ ոչ ճիշտ վկայակոչված լինել/:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Դոդոն ընդդեմ Բուլղարիայի գործով իր 17.01.2008թ. վճռում նշել է, որ «քաղաքացիական դատավարությունում ձևավորված պրակտիկայի համաձայն՝ դատարանները քննության են առնում և որոշում իրենց ներկայացված հայցերի իրավական բնութագիրը՝ առանց հաշվի առնելու հայցվորի առաջարկած իրավական բնութագիրը: Հայցվորը պետք է ներկայացնի վիճելի հարցը՝ հստակեցնելով փաստերը և իր հայցապահանջը, սակայն նա չի կրում որևէ պարտականություն՝ հստակեցնելու դրա բնութագիրն իրավունքում: Եթե նույնիսկ հայցվորը նշում է իր հայցի իրավական բնութագիրը, դատարանը կաշկանդված չէ դրանով: Դատարանը պետք է տա իր ինքնուրույն գնահատականը»:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Առաջին աստիճանի դատարանը, գործի նոր քննության արդյունքներով հստակեցրել է ներկայացված հայցապահանջները, դրանք դիտարկել որպես մեկ հիմնական և երեք ածանցյալ, անդրադարձել է ձեռքբերման վաղեմության ինստիտուտին, այդ մասով հայցը մերժել, իսկ մյուս հայցապահանջները մերժել է՝ Հայցվորի մոտ իրավական շահագրգռվածության բացակայության հիմքով:

Վերաքննիչ դատարանը, ներկայացված հայցը դիտարկելով որպես երկու ինքնուրույն՝ քաղաքացիական և վարչական դատավարության կարգով քննման ենթակա պահանջների համակցություն՝ ձեռքբերման վաղեմության մասով դատական ակտը թողել է օրինական ուժի մեջ, իսկ մնացած մասով՝ գործի վարույթը կարճել ընդդատության կանոնների խախտման հիմքով:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների տեսադաշտից դուրս է մնացել այն փաստը, որ Գերագույն դատարանն արդեն իսկ արձանագրել է հայցվորի մոտ իրավական շահագրգռվածության առկայությունը և գործը՝ ներկայացված հայցապահանջի բոլոր բաղադրատարրերի շրջանակներում դատարանի քննությանը ենթակա լինելը: Դրա հետ մեկտեղ, Գերագույն դատարանը կիրառելի է համարել նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ԼՂՀ օրենքի դրույթները և արձանագրել, որ տվյալ օրենքի «Վարչարարության օրինականությունը» վերտառությամբ 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով, իսկ «Հայեցողական լիազորությունները սահմանափակելը» վերտառությամբ 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հայեցողական լիազորությունն՝ օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը: 2. Հայեցողական լիազորություն իրականացնելիս

վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:»:

Նույն օրենքի՝ «Կամայականության արգելքը» վերտառությամբ 7-րդ հոդվածը սահմանում է. «1. Վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք: 2. Վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ: 3. Եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով: Վարչական մարմինն այդ սահմանափակումից կարող է հրաժարվել, եթե գերակա շահի առկայության պատճառով նա հետագայում մտադիր է մշտապես ընդունել մեկ այլ հայեցողական որոշում:»:

Այսինքն, Առաջին ատյանի դատարանը պետք է քննության առնել նաև Հայցվորի մյուս պահանջները, իսկ Վերաքննիչ դատարանը, ձեռքբերման վաղեմության մասով դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու պարագայում Հայցվորի մյուս պահանջները վարչական դատավարության կարգով քննման ենթակա լինելու փաստն արձանագրելով հանդերձ, պետք է այդ մասով բեկաներ դատական ակտը և գործն ուղարկել նույն դատարան՝ ընդդատության կանոնների պահպանմամբ նոր քննության:

Ամփոփելով, Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործի շրջանակներում գործի վարույթը մասնակիորեն կարճելով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմի խախտում, ինչը հիմք է այդ մասով դատական ակտը բեկանելու համար:

Իր հերթին, Առաջին ատյանի դատարանը՝ դուրս գալով Գերագույն դատարանի սահմանած գործի քննության ծավալից և Հայցվորի պահանջը՝ վարչական ակտը պատշաճ վարչարարություն իրականացված չլինելու հիմքով անվավեր ճանաչելու պահանջի մասով չքննելով, նույնպես թույլ է տվել դատավարական իրավունքի նորմի խախտում:

Վերոգրյալների հաշվառմամբ Գերագույն դատարանը գտնում է, որ գործը՝ 18.10.2017թ. թիվ 198Ա որոշումը, դրա հիման վրա Ստեփանակերտի քաղաքապետի և Հարություն Գասպարյանի միջև կնքված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 15.11.2017թ. թիվ 99 պայմանագիրը և դրա հիման վրա կատարված պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասով անհրաժեշտ է ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ վարչական դատավարության կարգով նոր քննության:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ միայն վերը նշված իրավական կարգավորումների և վարչական դատավարության կարգով գործի քննության արդյունքում հնարավոր կլինի իրավաչափ լուծում տալ Հայցվորի դատական պաշտպանություն հայցելու խնդրանքին:

5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

Անդրադառնալով դատական ծախսերի հարցին՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: ... 3. Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն հոդվածի կանոններին համապատասխան»:

Գերագույն դատարանը, նկատի ունենալով, որ սույն վճռաբեկ բողոքը ենթակա է մասնակի բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 256-րդ հոդվածի 1-ին մասով

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2019 թվականի դեկտեմբերի 09-ի որոշումը մասնակիորեն՝ 18.10.2017թ. թիվ 198Ա որոշումը, դրա հիման վրա Ստեփանակերտի քաղաքապետի և Հարություն Գասպարյանի միջև կնքված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 15.11.2017թ. թիվ 99 պայմանագիրը և դրա հիման վրա կատարված պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասով բեկանել և գործն այդ մասով ուղարկել Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ վարչական դատավարության կարգով նոր քննության:

Որոշումը մնացած մասով թողնել անփոփոխ:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ**

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

**Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ
Հ.ԱԲՐԱՀԱՄՆՅԱՆ
Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Հ.ԽԱԶԱՏՐՅԱՆ
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՑՆ ԴԱՏԱՐԱՆ

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում Բաղաքացիական գործ ԸԻԴ/2515/02/19
Բաղաքացիական գործ ԸԻԴ/2515/02/19
Նախագահող դատավոր՝ Ռ.Ջհանգիրյան
Դատավորներ՝ Լ.Ավանեսյան
Ն.Գրիգորյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք. Ստեփանակերտ 11-ին մարտի 2020 թվականի

ԱՀ Գերագույն դատարանը /այսուհետ՝ Գերագույն դատարան/
վճռաբեկության կարգով.

| | |
|-----------------------------|---------------|
| նախագահությամբ՝ | Ն.Նարիմանյանի |
| մասնակցությամբ՝ դատավորներ՝ | Հ.Խաչատրյանի |
| | Հ.Աբրահամյանի |
| | Գ.Գրիգորյանի |
| | Կ.Ղարայանի |

դռնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի «ՇԻՆՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Արմեն Խաչատրյանի ընդդեմ Արկադի Ռադիկի Մարությանի և ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի՝ փոխառության և գրավի պայմանագրերը չկնքված համարելու, որպես հետևանք գրավի իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու և գրանցման վկայականն ուժը կորցրած ճանաչելու պահանջների վերաբերյալ ԸԻԴ/2515/02/19 քաղաքացիական գործով ԱՀ վերաքննիչ դատարանի 2020 թվականի հունվարի 23-ի որոշման դեմ պատասխանող Արկադի Ռադիկի Մարությանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

2019 թվականի հուլիսի 11-ին «ՇԻՆՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Արմեն Խաչատրյանը (այսուհետ, նաև՝ Հայցվոր) հայցադիմում է ներկայացրել Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ, նաև՝ Առաջին ատյանի դատարան) ընդդեմ Արկադի Ռադիկի Մարությանի (այսուհետ, նաև՝ Պատասխանող) և ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի՝ «ՇԻՆՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերության և Արկադի Ռադիկի Մարությանի միջև 23.05.2019թ. կնքված փոխառության և գրավի պայմանագրերը (այսուհետ, նաև՝ վիճելի գործարք) չկնքված համարելու և որպես հետևանք CAT-432 E 14 24 OS պետհամարանիշի, C 4204861 էքսկավատոր-ամբարձիչի նկատմամբ գրավի իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու և գրանցման վկայականն ուժը կորցրած ճանաչելու պահանջներով:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, հարուցվել քաղաքացիական գործ և հրավիրվել նախնական դատական նիստ:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ քաղաքացիական գործով «ՇԻՆՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն ներգրավվել է որպես երրորդ անձ՝ պատասխանող կողմում:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ քաղաքացիական գործը նշանակվել է դատական քննության:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի նոյեմբերի 20-ի վճռով «ՇԻՆՍԵՆՎԻՍ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Արմեն Խաչատրյանի հայցն ընդդեմ Արկադի Ռադիկի Մարությանի և ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի՝ 23.05.2019թ. կնքված փոխառության պայմանագիրը չկնքված և գրավի պայմանագիրն անվավեր ճանաչելու, որպես հետևանք CAT-432 E 14 24 OS պետհամարանիշի, C 4204861 էքսկավատոր-ամբարձիչի նկատմամբ գրավի իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու և գրանցման վկայականն ուժը կորցրած ճանաչելու պահանջների մասին, մերժվել է:

Նշված վճռի դեմ 2019 թվականի դեկտեմբերի 20-ին վերաքննիչ բողոք է ներկայացրել «ՇԻՆՍԵՆՎԻՍ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Արմեն Խաչատրյանը:

Վերաքննիչ բողոքն ու քաղաքացիական գործը դատական կազմին են հանձնվել 2019 թվականի դեկտեմբերի 24-ին:

Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի (այսուհետ, նաև՝ Վերաքննիչ դատարան) 2019 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և նշանակվել դատաքննության:

2019 թվականի դեկտեմբերի 30-ին վերաքննիչ բողոքի պատասխան է ներկայացրել պատասխանող Արկադի Մարությանը:

Վերաքննիչ դատարանի 2020 թվականի հունվարի 23-ի որոշմամբ բավարարվել է վերաքննիչ բողոքը՝ Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի նոյեմբերի 20-ի վճիռը մասնակիորեն բեկանվել և փոփոխվել է:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ 2020 թվականի փետրվարի 03-ին վճռաբեկ բողոք է ներկայացրել պատասխանող Ա.Մարությանը՝ խնդրելով բեկանել Վերաքննիչ դատարանի 2020 թվականի հունվարի 23-ի որոշումը՝ ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի նոյեմբերի 20-ի վճիռը:

Գերագույն դատարանի 2020 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ և 13-րդ հոդվածները, սխալ է վերլուծել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 876-877-րդ հոդվածները, անտեսել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջները, ինչն էլ հանգեցրել է գործի սխալ լուծմանը:

Նշված պնդումը բողոք բերած անձը հիմնավորում է հետևյալ փաստարկներով:

Շարադրելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 876-րդ հոդվածը՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը փոխառության պայմանագիրն իրավացիորեն դասելով ռեալ պայմանագրերի շարքին, սխալ է մեկնաբանել ռեալ պայմանագրի էությունը:

Վերաքննիչ դատարանն ուշադրություն չի դարձրել, որ փոխառության պայմանագիրը ոչ թե կնքվել, այլ նոտարական վավերացում է ստացել այդ օրը: Իսկ պայմանագրի ուսումնասիրությունից հստակ երևում է, որ նոտարը վավերացրել է 2018 թվականին ծագած փոխառության իրավահարաբերությունները: Իսկ ինչ վերաբերում է փոխառության գումարն ընկերության բյուջե չմուտքագրելու հարցին, ապա դա ոչ թե Պատասխանողի, այլ՝ պարտապանի մեղքն է:

Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանները շատ ճիշտ են նշել, որ փոխառության գումարն ընկերության բյուջե չմուտքագրելու հարցը վերաբերում է ընկերության ներքին շրջանառությանը և պայմանագիրը չկնքված համարելու հիմք համարվել չի կարող:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը, որոշման պատճառաբանական մասում շարադրելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 876-877 հոդվածները, հանգել է այն եզրահանգման, որ կնքված փոխառության պայմանագիրն առոչինչ է: Նշել է նաև, որ 2018 թվականի սեպտեմբերին կողմերի միջև փոխառության պայմանագրի ձևին համապատասխանող գործարք չի կնքվել, ինչը նշանակում է, որ տվյալ գործարքն առոչինչ է, մինչդեռ, որոշման եզրափակիչ մասում նշել է, որ հայցը պետք է բավարարել և չկնքված համարել փոխառության պայմանագիրը:

Եթե Վերաքննիչ դատարանը հանգել է այն եզրահանգման, որ փոխառությունն առոչինչ է, քանի որ 2018 թվականի սեպտեմբերին կողմերի միջև փոխառության պայմանագրի ձևին համապատասխանող գործարք չի կնքվել և փոխառության պայմանագրի ձևի պայմաններն այդ օրվա դրությամբ չեն պահպանվել, ուրեմն, ստորադաս դատարանը պետք է գործարքը համարեր ոչ թե չկնքված, այլ անվավեր՝ առոչինչ, չնայած այդպիսի հայցապահանջ դատարանին ուղղված չէր, այսինքն՝ այն դուրս էր հայցի առարկայի շրջանակներից:

Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի վճիռը և պայմանագիրն առոչինչ դիտելով, խախտել է հայցի առարկայի և հայցի ծավալի շրջանակներից դուրս չգալու կանոնը, իսկ պայմանագիրը չկնքված համարելով՝ խախտել է դրա իրավական հիմքերը: Պայմանագիրը չկնքված համարելու միակ իրավական հիմքն ամրագրված է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդվածում, որը Վերաքննիչ դատարանի կողմից նույնիսկ չի էլ վկայակոչվել, մինչդեռ, գործարքը համարվել է չկնքված:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը բողոքաբերը հիմնավորել է նրանով, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է եսկան նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և ստորադաս դատարանի կողմից առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ (ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետեր):

Վերոգրյալի հիման վրա՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2020 թվականի հունվարի 23-ի որոշումը՝ ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի նոյեմբերի 20-ի վճիռը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Առաջին ատյանի դատարանի 05.06.2019թ. որոշմամբ անհատ ձեռնարկատեր Արմեն Խաչատրյանը նշանակվել է «ՇԻՆՍԵՆՎԻՍ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ:

2) Համաձայն 23.05.2019թ. Արկադի Մարությանի (փոխատու) և «ՇԻՆՍԵՆՎԻՍ» ՍՊԸ-ի (փոխառու) տնօրեն Մանվել Գալստյանի կողմից ստորագրված, նոտարական կարգով հաստատված «Փոխառության պայմանագիր» վերառությամբ փաստաթղթի՝ 2018թ. սեպտեմբերին փոխատուն փոխառուին է հանձնել 20.000.000 ՀՀ դրամի չափով գումար, իսկ մարման ժամկետ է սահմանվել 2021թ. մայիսի 31-ը:

3) Վերաքննիչ դատարանի դատական նիստում Արկադի Մարությանը հայտնել է, որ 20.000.000 ՀՀ դրամ գումարը Մանվել Գալստյանին հանձնել է 2018թ. սեպտեմբեր ամսին, այլ ոչ թե 23.05.2019թ.՝ «փոխառության պայմանագիր» վերառությամբ փաստաթուղթը կազմելուց անմիջապես հետո:

4) Արկադի Ռադիկի Մարությանի և «ՇԻՆՍԵՆՎԻՍ» ՍՊԸ-ի՝ ի դեմս Մանվել Գալստյանի կողմից ստորագրված և նոտարական կարգով վավերացված

23.05.2019թ. գրավի պայմանագրի պատճենի համաձայն՝ գրավառուն փոխառուին, 23.05.2019թ. թիվ 2039 փոխառության պայմանագրի համաձայն, տրամադրում է դրամական միջոցներ՝ 20.000.000 ՀՀ դրամի չափով՝ առանց տոկոսավճարի, 2018թ. սեպտեմբերին, մարման ժամկետը մինչև 2021թ. մայիսի 31-ը, իսկ գրավատուն գրավառուին է հանձնում սեփականության իրավունքով իրեն պատկանող CAT-432 E էքսկավատոր-ամբարձիչը (պետհամարանիշ՝ 14 24 OS, շարժիչ C 4204861): Շարժական գույքը սեփականության իրավունքով պատկանում է «ՇԻՆՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին՝ համաձայն ճանապարհաշինարարական տեխնիկայի թիվ 00521 տեխնիկական վկայագրի՝ տրված 29.11.2018թ.:

5) Շարժական գույքի գրավի, լիզինգի իրավունքների գրանցման վկայականի համաձայն՝ շարժական գույքի գրանցման մատյանում CAT-432 E էքսկավատոր-ամբարձիչի /պետհամարանիշ՝ 14 24 OS, շարժիչ C 4204861/ նկատմամբ 23.05.2019թ. գրավի պայմանագրի հիման վրա գրանցվել է Արկադի Մարությանի գրավի իրավունքը:

6) Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ քաղաքացիական գործով «ՇԻՆՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն ներգրավվել է որպես երրորդ անձ՝ պատասխանող կողմում:

7) Հայցվորը, որպես պայմանագիրը կնքված չլինելու փաստարկ, վկայակոչում է Ընկերության հաշվապահական փաստաթղթերում փոխառության պայմանագրի կնքման պահին՝ 20.000.000 ՀՀ դրամ գումար մուտք եղած չլինելը:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում, որ տվյալ դեպքում Գերագույն դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Միաժամանակ, Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 876-877-րդ հոդվածների և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի խախտման առումով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

ԱՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ազատ է անելու այն ամենը, ինչն արգելված չէ Սահմանադրությամբ կամ օրենքով և չի խախտում այլոց իրավունքներն ու ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ, նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝

օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման: Քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի պահպանության, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:

Նույն օրենսգրքի 437-րդ հոդված 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով:

Վկայակոչված նորմերի օրենսդրական կարգավորումից բխում է, որ քաղաքացիական իրավունքի սուբյեկտները քաղաքացիաիրավական հարաբերություններում իրավահավասար են, ունեն իրավունքների իրացման հավասար երաշխիքներ: Բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձինք հավասարապես օգտվում են պայմանագրի ազատության սկզբունքից, որը նրանց համար ապահովվում է պայմանագրի կնքման, ձևի և պայմանների ընտրության, բովանդակության ազատ շարադրման հնարավորություն:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ, նաև՝ Դատավարության օրենսգրք) 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա: Նույն օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը վճիռ կայացնելիս որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Մեջբերված դատավարական նորմերի բովանդակությունից հետևում է, որ դատարանը պարտավոր է նախ՝ քաղաքացիական գործը հարուցել միայն համապատասխան հայցի կամ դիմումի հիման վրա, և 2-րդ՝ քաղաքացիական գործը քննել միայն այդ գործով ներկայացված հայցապահանջի շրջանակներում:

Դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական գործով ապացույցներ են՝ գրավոր և իրեղեն ապացույցները, փորձագետների եզրակացությունները, վկաների ցուցմունքները, գործին մասնակցող անձանց ցուցմունքները:

Նույն օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նույն օրենսգրքի 123-րդ հոդվածի «Վճռի բովանդակությունը» վերաառությամբ 123-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի «գ» ենթակետը սահմանում է, որ դատարանի վճռի պատճառաբանական մասը պետք է պարունակի դատարանի եզրակացությունն ապացուցման ենթակա տվյալ փաստի ապացուցված լինելու վերաբերյալ՝ գնահատելով տվյալ փաստի հաստատման կամ մերժման համար գործին մասնակցող անձանց ներկայացրած յուրաքանչյուր ապացույցը՝ նույն օրենսգրքի 47-րդ և 49-րդ հոդվածներին համապատասխան:

Ինչպես հետևում է վկայակոչված դատավարական նորմերի վերլուծությունից՝ օրենսդիրը սպառնիչ կերպով ամրագրելով քաղաքացիական

դատավարությունում օգտագործվող ապացույցների տեսակները և դրանց գնահատման կանոնները, միաժամանակ, դատարանի վրա պարտականություն է դրել նշելու այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և որոշում կայացնելիս, ինչպես նաև պատճառաբանելու, թե ինչու է այս կամ այն ապացույցը մերժում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի հանգամանքների բազմակողմանի հետազոտության մասին:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն է, մեկ ապացույցը մյուս ապացույցների միջոցով ստուգելը, ներկայացված ապացույցների միջև եղած հակասությունները վեր հանելը և վերացնելը, որի արդյունքում պետք է դատական գնահատման ենթարկել յուրաքանչյուր ապացույցի վերաբերելիությունը և թույլատրելիությունը, որոնց արդյունքում միայն հնարավոր կլինի գնահատել ապացույցների արժանահավատությունը և գործի լուծման համար դրանց բավարար լինելը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հայցվորը պահանջել է «ՇԻՆՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերության և Արկադի Մարությանի միջև 23.05.2019թ. կնքված փոխառության պայմանագիրը համարել չկնքված և, որպես հետևանք, CAT-432 E 14 24 OS պետհամարանիշի, С 4204861 էքսկավատոր-ամբարձիչի նկատմամբ գրավի իրավունքի պետական գրանցումն անվավեր, իսկ գրանցման վկայականն ուժը կորցրած ճանաչել:

Առաջին ատյանի դատարանը մերժել է հայցը՝ փոխառության պայմանագիրը չկնքված համարելու օրենքով սահմանված հիմքերի բացակայության պատճառաբանությամբ:

Առաջին ատյանի դատարանը գտել է, որ փոխառության գումարն Ընկերության տնօրենին տրամադրված լինելու, սակայն այն Ընկերության բյուջե չմուտքագրելու հանգամանքը չի կարող փոխառության պայմանագիրը չկնքված համարելու հիմք հանդիսանալ և գտել, որ փոխառության գումարն Ընկերության բյուջե չմուտքագրելը վերաբերում է Ընկերության ներքին ֆինանսական շրջանառությանը, ուստի Դատարանի գնահատմամբ նշվածը պայմանագիրը չկնքված համարելու բավարար հիմք չի կարող հանդիսանալ, քանի որ գործով նշված չափի գումար Ընկերության տնօրենին տրամադրված չլինելն ապացուցող փաստեր ձեռք չեն բերվել և չեն հետազոտվել:

Վերաքննիչ դատարանը բողոքը բավարարելիս, անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ դիրքորոշմանը, գտել է, որ այն անհիմն է, քանի որ 20.000.000 ՀՀ դրամ գումարը Պատասխանողը չի հանձնել Ընկերության տնօրենին՝ «փոխառության պայմանագիր» վերտառությամբ փաստաթղթի նոտարական գրասենյակում վավերացման պահին կամ դրանից անմիջապես առաջ կամ հետո, որն էլ հիմք է փոխառության պայմանագիրը չկնքված համարելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Գերագույն դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1.Արդյոք ՍՊ ընկերության և Պատասխանողի միջև գրավոր ձևով կնքված և նոտարական վավերացում ստացած փոխառության պայմանագրում նշված գումարն Ընկերության տնօրենի կողմից Ընկերության հաշվին մուտք չանելը հիմք է փոխառության պայմանագիրը չկնքված համարելու համար:

2.Արդյոք փոխառության պայմանագրի գումարը նախապես՝ մինչև պայմանագրի ստորագրումը և նոտարական վավերացումը, փոխատուի կողմից փոխառուին հանձնած լինելը հիմք է պայմանագիրը չկնքված լինելը հաստատված համարելու համար:

Օրենսգրքի 876-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակալին հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին

հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից:

Նույն օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների՝ կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխատուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ:

Վկայակոչված նորմերի վերլուծությունից հետևում է, որ փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով և կնքված է համարվում պայմանագրի առարկան՝ դրամ կամ այլ գույք հանձնելու պահից: Պայմանագրի գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է փոխառության պայմանագրի անվավերության:

Վերաքննիչ դատարանը, յուրովի մեկնաբանելով Օրենսգրքի 876-877-րդ հոդվածները, գտել է, որ 2018թ. սեպտեմբերին Ա.Մարությանի կողմից Մ.Գալստյանին «ենթադրյալ» 20.000.000 ՀՀ դրամ գումարը տալուց առաջ կամ անմիջապես հետո օրենքով սահմանված գրավոր ձևի պահպանմամբ չի ձևակերպվել փոխառության պայմանագիրը, այլ այն ստորագրվել է ութ ամիս անց, հետևաբար, չի կարող համարվել փոխառությունը տալուց անմիջապես հետո կազմված փաստաթուղթ, հետևաբար կողմերի միջև չի պահպանվել փոխառության պայմանագրի գրավոր ձևը, որը և օրենքի ուժով հանգեցնում է այդ պայմանագրի անվավերության՝ անկախ դատարանի կողմից տվյալ գործարքն անվավեր ճանաչելուց (առոչինչ գործարք): «Այսինքն՝ պետք է արձանագրել, որ տվյալ դեպքում փոխառության իրավահարաբերությունները չեն ծագել, հետևաբար, նաև այդ պատճառաբանությամբ փոխառության պայմանագիրը կնքված համարվել չի կարող» (գ.թ.153):

Գերագույն դատարանն արձանագրում է, որ, նախ, սույն գործով Հայցվորը պահանջել է Դատարանից վիճելի գործարքը համարել չկնքված անփողության հիմքով, այն պատճառաբանությամբ, որ փոխառության պայմանագրում նշված գումարն Ընկերության դրամարկղ կամ Ընկերության հաշվեհամարին մուտք չի եղել: Վերաքննիչ դատարանը, խախտելով Դատավարության օրենսգրքի սույն որոշման վերը վկայակոչված 3-րդ հոդվածի կարգավորումը, դուրս է եկել գործի քննության շրջանակներից և քննության առարկա դարձրել մեկ պահանջ՝ գործարքի անվավերությունը, որպիսի պահանջ Հայցվորը չի ներկայացրել: Երկրորդ, Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը վիճահարույց գործարքի առարկա հանդիսացող գումարը փոխառության պայմանագրի կնքման պահին փոխատուի կողմից նախկինում ստացած լինելու հանգամանքը չի կարող դիտվել փոխառության պայմանագիրը կնքված չհամարելու հիմք այն պարզ պատճառաբանությամբ, որ օրենսդիրն, ի դեմս Օրենսգրքի 881-րդ հոդվածի կարգավորման, փոխառության պայմանագիրն անփողության հիմքով կնքված չհամարելու հիմք է դիտարկել միայն փոխառության պայմանագրի առարկա հանդիսացող գումարն ընդհանրապես ստացված չլինելու փաստի առկայությունը: Իսկ նման փաստի ապացուցումը Դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի կարգավորման ուժով կրում է սույն գործով Հայցվորը, որն էլ տվյալ փաստը չի ապացուցել: Հետևաբար, Գերագույն դատարանը հիմնավոր է համարում Առաջին աստիճանի դատարանի այն պատճառաբանությունը, որ փոխառության պայմանագիրը չկնքված համարելու հիմքերը սույն գործով բացակայում են, քանի որ փոխառության գումարն Ընկերության տնօրենին տրամադրված լինելու, Ընկերության տնօրենի (փոխատու) և Պատասխանողի (փոխառու) միջև գրավոր ձևով կնքված և նոտարական վավերացում ստացած փոխառության պայմանագրի առկայության պարագայում, փոխառության գումարն Ընկերության բյուջե չմուտքագրելը չի կարող փոխառության պայմանագիրը չկնքված համարելու հիմք հանդիսանալ:

Օրենսգրքի 881-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխառուն իրավունք ունի վիճարկել փոխառության պայմանագիրը, եթե ապացուցում է, որ ինքը

փոխատուից իրականում դրամ կամ այլ գույք չի ստացել կամ ստացել է պայմանագրում նշվածից ավելի պակաս քանակով, իսկ 3-րդ մասի համաձայն էթե փոխառության պայմանագիրը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով վիճարկելիս պարզվում է, որ փոխառուն դրամը կամ այլ գույքն իրականում չի ստացել փոխատուից, փոխառության պայմանագիրը համարվում է չկնքված: Եթե դրամը կամ այլ գույքը փոխառուն փոխատուից ստացել է պայմանագրում նշվածից ավելի պակաս քանակով՝ պայմանագիրը կնքված է համարվում ստացված քանակի գումարի կամ գույքի չափով:

Նշված նորմի բովանդակությունից ակնհայտ է, որ փոխառության պայմանագիրը կարող է չկնքված համարվել միայն այն դեպքում, երբ փոխառուն ապացուցի, որ փոխառության պայմանագրի առարկա հանդիսացող գույքը կամ դրամական միջոցներն իրականում չի ստացել փոխատուից կամ ստացել է ավելի պակաս չափով:

Վկայակոչված իրավական նորմերի համատեքստում վերլուծելով գործի փաստերը՝ Գերագույն դատարանը, Դատավարության օրենսգրքի 44-րդ և 49-րդ հոդվածների դրույթների կիրառմամբ, գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլատրելի և վերաբերելի ապացույցով չի հիմնավորել վիճելի գործարքով Պատասխանողի կողմից Ընկերության տնօրենին 20.000.000 ՀՀ դրամ գումարը տված չլինելու փաստը: Նշվածն էլ հիմք է տալիս Գերագույն դատարանին արձանագրելու, որ Առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ գործով հիմնավորվել է փոխառության գումարներն Ընկերության տնօրենին տրամադրված լինելու հանգամանքը, ապացուցվել է, որ այդ գումարները, չնայած վճարման եղանակն էական չէ փոխառության գումարի տրաման փաստի հաստատման առումով, այնուամենայնիվ, տրամադրվել են, դրամարկը չեն մուտքագրվել, այսինքն տրամադրվել են կանխիկ եղանակով, հետևաբար առկա չեն փոխառության պայմանագիրը չկնքված համարելու օրենքով սահմանված հիմքերը, հիմնավոր է:

Սույն որոշման իրավական վերլուծությունների համատեքստում Գերագույն դատարանը փաստում է, որ փոխառության պայմանագրի առարկա հանդիսացող դրամական միջոցները մինչև փոխառության պայմանագրի գրավոր կնքման պահը փոխառուի կողմից ստացած լինելը չի կարող գործարքն առաջին չափով համարելու հիմք հանդիսանալ այն պատճառաբանությամբ, որ օրենսդիրը հստակ կարգավորումներով սահմանել է փոխառության պայմանագիրն առաջին չափով լինելու հիմքը. ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդված 3-րդ մասի համաձայն՝ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է փոխառության պայմանագրի անվավերության: Նման պայմանագիրն առաջին չափով է: Այսինքն, օրենսդիրն առաջնության հիմք է համարում բուն գրավոր գործարքի բացակայությունը, անկախ գումարի ստացման ժամանակահատվածից:

Գերագույն դատարանը գտնում է, որ նման պայմաններում Առաջին ատյանի դատարանը ճիշտ եզրահանգման է եկել հայցն ամբողջովին՝ նաև գրավի իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու և գրանցման վկայականն ուժը կորցրած ճանաչելու պահանջները մերժելով:

Ամփոփելով վերոշարադրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Գերագույն դատարանը գալիս է այն եզրահանգման, որ վճարվել է բողոքի հիմքի առկայությունը բավարար է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 241-րդ հոդվածի հիմքով Վերաքննիչ դատարանի քննարկվող որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Գերագույն դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Գերագույն դատարանի լիազորությունը, համաձայն որի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանը՝ վերաքննիչ դատարանի կողմից դատական

ակտը փոփոխվելու դեպքում ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին: Այս դեպքում Գերագույն դատարանը լրացուցիչ պատճառաբանում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, եթե այն թերի կամ սխալ է պատճառաբանված:

Նշված դիրքորոշման համար Գերագույն դատարանը հաշվի է առնում «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի դրույթը, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Գերագույն դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է նույն կոնվենցիայով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումը վտանգ է պարունակում նշված իրավունքի խախտման համար:

Գերագույն դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Անդրադառնալով պետական տուրքի հարցին, Գերագույն դատարանը գտնում է, որ այն պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արկադի Մարությանի վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ԱՀ վերաքննիչ դատարանի ՇԻԴ 2515/02/2019 քաղաքացիական գործով 2020 թվականի հունվարի 23-ի որոշումը և օրինական ուժ տալ ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2019 թվականի նոյեմբերի 20-ի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ**

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

**Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ
Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հ.ԱԲՐԱՀԱՄՆՅԱՆ
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Կ.ՂԱՐԱՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

26 մարտի 2020թ.

N -1

ք. Ստեփանակերտ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 32-ՐԴ
ՀՈՂԿԱԾԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 16.01.2020 ԹՎԱԿԱՆԻ N 27-Ն ՈՐՈՇՄԱՆ
ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

Ուսումնասիրելով «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպության տնօրեն Դանիել Իոննիսյանի 17.03.2020թ. դիմումը, դեկլարավելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 48-րդ հոդվածով և նպատակ ունենալով պարզաբանելու Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքի 32-րդ հոդվածի և Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 16.01.2020 թվականի N 27-Ն որոշման շուրջ ծագած հարցերը՝ Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

ՊԱՐԶԵՑ.

«Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպությունը ս.թ. մարտի 17-ին Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացրած դիմումում նշել է, որ ԱՀ ընտրական օրենսգրքը և ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները չունեն իրավական կարգավորում դիտորդի կարծիքի գրառման ընթացակարգի վերաբերյալ: Ստացվում է, որ իրավական ակտերով պարզեցված չեն դիտորդի կողմից իր կարծիքը արտահայտելու ընթացակարգը, դեպքերը և գրառում կատարելու կարգը, մասնավորապես՝ պարզեցված չեն հետևյալ հարցերը.

1. Գրանցամատյանում դիտորդը անձամբ է գրառում կատարելու, թե ինքը կարծիքը արտահայտելու է բանավոր, իսկ քարտուղարը կատարում է գրառումներ,

2. Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի կամ վստահված անձի կողմից չի արձանագրվել խախտում և դրա վերաբերյալ գրառում չի կատարվել, սակայն դիտորդի կարծիքով տեղի է ունեցել ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա այս դեպքում դիտորդը հնարավորություն ունի կարծիքը գրառելու կամ պահանջելու, որպեսզի հանձնաժողովի կողմից կատարվի դիտորդի կարծիքի վերաբերյալ գրառում:

«Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպությունը, թվարկված հարցերի կապակցությամբ, հայտնել է հետևյալ կարծիքը.

«1. Այդ դիտորդն իրավունք ունի, ընտրական իրավախախտման վերաբերյալ իր կարծիքը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին ներկայացնելուց հետո, ինքնուրույն գրառում կատարել գրանցամատյանում:

2. Ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտման դեպքում դիտորդը կարող է կարծիքը ներկայացնել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին և կատարել գրառում

գրանցամատյանում, անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ խախտման վերաբերյալ դիտարկում կամ գնահատական վստահված անձի կամ հանձնաժողովի անդամի կողմից կատարվել է, թե՛ ոչ»:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Արցախի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտի պաշտոնական պարզաբանումը նորմատիվ իրավական ակտի դրույթների իմաստի պարզմանն ուղղված գործընթաց է՝ դրանց ոչ բավարար հստակության, տարաբնույթ ընկալման, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտի կիրառման բնագավառում ծագած հարցերի պարզման անհրաժեշտության դեպքերում»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված մարմինները տալիս են իրենց ոլորտային օրենսդրական ակտերի պաշտոնական պարզաբանումը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Արցախի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, ենթաբաժնի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից»:

Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «Դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչն իրավունք ունեն՝

6) հրապարակայնորեն, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով հայտնելու կարծիք, անելու հայտարարություն ընտրությունների կազմակերպման և անցկացման վերաբերյալ»:

Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «3. Դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչն իրավունք չունեն միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և քվեարկության ընթացքին, իրականացնելու քարոզչություն, ընտրական հանձնաժողովի անդամներին տալու ցուցումներ, ներկայացնելու պահանջներ»:

Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «2...., Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը գրառումներ է կատարում գրանցամատյանում, օժանդակում գործառույթ իրականացնող անդամներին, փոխարինում նրանց ժամանակավոր բացակայության դեպքում»:

Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «5. Եթե հանձնաժողովի անդամը կամ վստահված անձը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել սույն օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունի պահանջելու, որ իր գնահատականն արձանագրվի գրանցամատյանում»:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Արցախի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով՝ Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ Է.

1. Դիտորդի կարծիքի վերաբերյալ գրանցամատյանում գրառումներ կատարվում են բացառապես տեղամասային ընտրական հանձնաժողովի

նախագահի կամ վերջինիս հանձնարարությամբ՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից:

2. Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտման դեպքում դիտորդը կարող է կարծիքը ներկայացնել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին՝ առաջարկելով, որպեսզի հանձնաժողովը կատարի դիտորդի կարծիքի վերաբերյալ գրառում՝ անկախ այն հանգամանքից, թե այդ խախտման վերաբերյալ դիտարկում կամ գնահատական վստահված անձի կամ հանձնաժողովի անդամի կողմից կատարվել է, թե՛ ոչ:

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ս.ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ

